

2nd Sp4

2nd Sp4

891.99

2-20



БИБЛИОТ. МА  
Главнаго Управленія  
по делам печати  
№ 543

ՀԱՄԻԿ

«Գրական»

# ՎԱՐԺԱՊԵՏԸ

ԵՐԿՈՒ ԶՐՈՅՑ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

ԱՆԷՔՍԱՆԴՐԱՊՈՒ

Տպարան Գեորգ Ս. Սամոյլանցի

1909

891.99

Z-20



19 NOV 2017

գրք-հ

6013

391.99


2-20

ՀԱՄԻԿ

# ՎԱՐԺԱՊԵՏԸ



ԵՐԿՈՒ ԶՐՈՅՑ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ



ԱԼԷԲՍԱՆԴՐԱՊՕԼ

Տպարան Գէորգ Ս. Սանդեանցի

1909



## 1.

—Վարժապետ, էս օր չէս գայ գաշտ. խոտհարն սկսել է, խոտերն սկսում ենք: Հատ ուրախ է անցնում,—ասաց ուսումնարանի մօտով անցնող խոտհար Սարգիսը կանգնած վարժապետին:

—Կզանք, Սարգիս, տիկինը գործը պրծնի,—պատասխանեց ուրախ ձայնով գիւղական ուսուցիչը:

Վարժապետը գիւղական այն համեստ ուսուցիչներից էր, որոնք գիւղացու դառնութեան և ուրախութեան մասնակից են գիւղում և ոչինչ չեն խնայում գիւղացու մտաւոր, տնտեսական և իրաւական դրութեան բարւոքելուն: Նա գիւղացիների մեծ եղբայրն էր, գիւղի բժիշկը, «ատվական», ինչպէս իրենք գիւղացիք էին ասում:

—Ախպէր, մեր վարժապետի նման մարդ չի լինի: Մեծի հետ մեծ է, փոքրի հետ փոքր, աղքատի հետ աղքատ, խեղճի հետ խեղճ: Զարմանալի մարդ է, իսկը գիւղացի. հալբաթ ինքն էլ գիւղացու տղայ է,—ասում էին զարմանքով գիւղացիները մէկ գմէկու:

Եւ իրաւ. վարժապետը գիւղի մէջ ամեն բան էր: Ում մի ցաւ ունէր նրան էր գիմում, նրանից խորհուրդ հարցնում: Մէկի տանը հիւանդ էր լինում, նախ և առաջ վարժապետին էին կանչում, որն առանց տրոնջալու օգնութեան էր գնում: Մէկին որեւէ գործ ունի «սուղում» կամ պրիստաւի մօտ, վարժապետի մօտ էր վաղում և նրանից խորհուրդ հարցնում: Պրիստաւ էր գիւղ



56313-66



գալիս, իսկոյն վարժապետին էին կանչում նրա հետ խօսելու: Եւ ահա երկու տարի է, ինչ վարժապետը գիւղումն է, ոչ պրիստաւը, ոչ գալաւան, ոչ ստրաժնիկը ոչ մի մարդի չեն ասել, տեղդ ծուխ է դէն նստիր: Ում դարտն է կտրւել վարժապետի հետ բաւ մտնի: Դեռ նոր էր եկել, երբ գիւղ եկող արքիզին մի հիւանդ գիւղացուց պահանջում է ձին շրջեցնել փողոցում բրտինքը ցամաքելու համար: Խեղճն անկարող էր կատարել արքիզու պահանջը, որովհետեւ փայտի օգնութեամբ հազիւ էր փողոց դուրս եկել մարդի երես տեսնելու: Արքիզին իւր հրամանն անկատար տեսնելով, սկսել էր անխնայ մտրակել խեղճ հիւանդին: Այդ ժամանակ փողոցի ծայրից անցնում էր նոր վարժապետը, որ աղաղակող գիւղացուն տեսնելով մօտ եկաւ, արքիզուն արգելելու: Ախպէր, կրակ էր էլի, — մօտ եկաւ թէ չէ, ռուսերէն մի քանի խօսք բլբլաց, ինչ ասաց, չգիտեմ, արքիզին բարկացած «ուբերայսա» դռաց: Վարժապետ եմ ասում, կպաւ դրա եախիցը, ծախց դրաւ ծնկան տակը և տուր որ կտաս: Հազիւ տանուէրը մէջ ընկաւ, աղաչանք պաղատանք արաւ և վարժապետի ձեռքից խլեց արիւնոտ արքիզուն, որի քթից արիւնը աղբիւրի պէս հոսում էր: Արքիզին ուշունց տալով, թողեց ու գիւղից հեռացաւ, մի քանի շաբաթից վարժապետին պաւեստկա եկաւ: Ինչ եղաւ, չեղաւ, մէկ էլ էն լսիցինք, որ դատարանը արքիզուն ատկազ էր արել և վարժապետին մեղքից ազատել:

— Յուսումն էդպէս տեղն ա հարկաւոր է, — վրայ էր բերում ամեն անգամ որեւէ գիւղացի, ուսման մէջ գտնելով վարժապետի ամբողջ ուժն ու համարձակութիւնը:

Վարժապետը 24 տարեկան երիտասարդ էր. նրա

կինը ևս պակաս ուսում չունէր: Նրանք ամառ-ձմեռ գիւղումն էին, միայն անցեալ տարի մի ամսով ամառը հայրենիք գնացին ծնողներին տեսնելու: Ամբողջ օրը մէկ մէկու հետ սիրով, մէկ մէկու կուռ բռնած մինչև ճաշը դաս էին տալիս, ճաշից յետոյ էլ որեւէ ուրիշ աշտանքով պարապում դպրոցի բակում կամ տանը: Իսկ ամառը, հօ հանգիստ չունէին. բացի գործից նրանք մէկ դաշտ էին դուրս գալիս, մէկ մօտիկ անտառ էին գնում, մէկ գիւղի ծայրին մեծաքսի գործարանը, որի վերակացուն վարժապետի նախկին ընկերներից էր և որով վարժապետը շատ էր հետաքրքրւում: Իսկ երեկոյեան արդէն «մեծերի ուսումն էր», որտեղ գիւղի հասակաւորները հաւաքւում էին, սենեակի մի կողմը կանայք էին նստում, մի կողմը տղամարդիկ և վարժապետն ու իր կինը գիւղի քահանայի հետ նրանց դաս էին տալիս: Իսկ ամառ ժամանակ էլ ով կուգէր կգար, ով կուգէր չէր գայ: Վարժապետը եկողների համար լրագիր էր կարդում:

Գիւղացիք շատ էին սիրում վարժապետին և նրա կնոջը, մանաւանդ, որ սրանք շատ անգամ հետաքրքիր պատմութիւններ էին պատմում ուրիշ երկիրներից, ուրիշ ազգերից:

## 2.

Դաշտում խոտհարողները գլուխները մէկ մէկ գոյնը գոյն թաշկինակ կապած ուրախ երգերով գերանդին ձեռքներին խոտ էին հարում: Ջահէլ հարս ու աղջկերքն էլ եղանը ձեռքներին խոտն էին ցրւում շուտ չորանալու համար: Ճաշի հանգստից նոր վեր կացած գիւղացիք աւելի եռանդ էին ստացել, մանաւանդ երեկոյեան հովն էլ վրայ էր հասել: Այդ ժամանակ Սարգսի



դորուղը մտաւ վարժապետն իր կնոջ հետ և ուղղեց ուղիղ դէպի Սարգիսը: Վերջինս կանգ առաւ, վեր դրաւ գերանդին և ուրախ ժպտով մի փունջ ծաղիկ ձեռքին վարժապետին դիմաւորեց և փունջը վարժապետի կնոջը յանձնեց:

Շուտով հարեաններն էլ հաւաքեցին և վարժապետը բոլորին էլ ոգևորելով, ոյժ և կարողութիւն մաղթելով խնդրեց աշխատանքը շարունակել, իսկ ինքը մէկ մէկ կշռջի դորուղները և կզրուցի: Քիչ յետոյ բոլորն իրենց գործին էին, վարժապետն էլ կնոջ հետ քաղցր զրուցելով, բացատրելով մէկ զորուղից միւսն էր անցնում և բոլորի մօտ էլ համարեայ նոյն ոգևորիչ և սիրալիր խօսակցութիւնն էր ունենում:

Վերջնակէ՛մ արեգակը անցաւ նարի քամակը և գիւղի եկեղեցու զանգերը գիւղացիներին աշխատանքից յետ կանչեցին: Օրն ուրբաթ էր: Վարդավառի պասի ուրբաթ օրը: Միւս օրը տօն էր, գիւղացիք մտադիր էին տօնելու, չնայած շտապում էին խոտը շուտ վերցնել: Մի բանի ըոպէից արդէն հեռու դորուղներից խոտհարները սկսեցին վերադառնալ և վարժապետին Սարգիսի դորուղում գտնելով խմբեցան նրա շուրջը միասին վերադառնալու համար: Շուտով Սարգիսն էլ կապեց իւր ունեցած չունեցածը և գերանդուն ուսին միացաւ նրանց: Նրանք ահագին խմբով շրջապատած վարժապետին ու նրա կնոջը մերթ իրենց դորուղն էին գտնում, մերթ գերանդին, մերթ վարժապետին լսում: Իսկ ոմանք էլ աշխատանքից գանգատւում:

— Է՛հ, վարժապետ, երանի քեզ, ոչ հուձ ես անում, ոչ խոտհար: Տանջւում ենք տարին բոլոր, ձեռքներս բան չի ընկնում, — տրտնջաց գիւղացիներից մէկը:

— Սխալ ես եղբայր, — ուր է, որ ես էլ ձեզ պէս

աշխատել կարողանայի, բաղդաւորութիւն էր: Ամեն բանի մայրը աշխատանքն է, ով չի աշխատում, նա քաղցրութեամբ էլ չի վայելում: Ամբողջ աշխարհը աշխատանքով է առաջ գնում, առանց աշխատանքի ոչինչ չի լինում: Այդպէս է, իմ աշխատանքը ձեր աչքին է թեթեւ երևում, ձերն էլ իմ: Բայց պէտք է ասեմ, որ ոչ ես կարող եմ ձեր բանը տալ, ոչ էլ դուք իմը: Ամեն մարդ իւր գործն ունի: Մենք բոլորս պէտք է ձգտենք, որ մեր աշխատանքը միմեանց խառնելով ընդհանուրիս դարտին ճար անենք: Գուք էք ասում, որ մարդու ճակատին էս ա գրւած: Այ, երբ կվերջացնէք ձեր աշխատանքը և մենք էլի կսկսենք մեր «ուսումը», այն ժամանակ ես ձեզ կպատմեմ թէ ոնց են աշխատել մեր պապերը, պապերի պապերը, ինչի համար են դործադրել իրենց աշխատանքը, ինչպէս է, որ այժմ մէկն աշխատում է, միւսը վայելում, ինչու այժմ ձեր աշխատանքը ձեր գրպանում չի մնում, ինչ պիտի անենք, որ մի քիչ մենք էլ կեանք քաշենք: Այ, երբ այս բոլորի մասին կխօսենք, այն ժամանակ դուք կտեսնէք, թէ ինչ քաղցր ու դառն բան ա աշխատանքը:

— Է՛, վարժապետ, էնքան ասացիր, ասացիր, իսկի մի օր չ'ասացիր, մի տեսնենք էդ ասածներդ ինչ ջուռա զադ են, — կատակով վրայ բերաւ գիւղացիներից մէկը, — հմի էլ ասում ես, երբոր «յուսումը» կսկսենք, ախպէր հմի ինչ ա որ է: Եգուց կիւրակի, միւս օրը կիւրակի, էն միւս օրը կիւրակի, մենք պարապ, դու էլ հօ էդ կողմից պարապ ու պարապ: Նրեխաներին կուղարկենք դորուղում խաղան, համ էլ խոտին նայեն: Մէկ ուխտ ունէինք, էն էլ ասում են աւելորդ բան ա: Էլ ինչ մնաց: Դու հա խօսա, մենք էլ տկանջներս լեն բա-



ցած լսենք քո ասածը.

—Ըդորդ էլ ասում ա,— վրայ բերին այս ու այն կողմից գիւղացիք,— էլ ինչ ա մնում, պարապ թափւած ենք:

—Եթէ այդպէս է, էսօր յոգնած էք, էսօր հանգըստացէք, էգուց երեկոյեան հաւաքենք, ես ձեզ մի հետարբքիր բան կը պատմեմ, թէ մեր պապերը է հազար հազար տարի սրանից առաջ ինչպիսի կեանք էին վարում:

Մինչ այս նրանք արդէն մօտեցել էին գիւղին և արդէն ուսումնարանի մօտ էին. վարժապետն ու իր կիներ բարի գիշեր ասելով ուսումնարան մտան. իսկ գիւղացիք գնացին իրանց տները, միւս օրը երեկոյեան հաւաքւելու և հետաքրքիր պատմութիւններ լսելու յուսով:

### 3.

Չաբաթ երեկոյեան դպրոցի մեծ սենեակը լցւել էր գիւղացի տղամարդկանցով և կանանցով, որոնք եկել էին վարժապետի նոր պատմութիւնները լսելու: Ընդհանուր հետաքրքրութիւն ամեն կերպ աչքի էր ընկնում: Նախ քան բոլորի հաւաքւելը և վարժապետի սկսելը, եկողներն իրանց օրւայ լսածի մասին էին հարցնում, տեսածի մասին պատմում:

Վերջապէս բոլորը բռնեցին իրենց տեղերը, ըստ երեւոյթին այլևս եկող չկար: Եկածներն էլ դաշտային աշխատանքների այդ օրերին մի անսպասելի թիւ էին կազմում: Ծխողներն էլ բակից ներս եկան և վարժապետէ սկսեց իր հետաքրքիր պատմութիւնը:

—Գիտէք, սիրելիք, թէ մեր պապերի պապերը, աշխարհի ստեղծագործութիւնից անմիջապէս յետոյ և

դաժ մարդիկ ինչպէս էին ապրում: Այսօր դուք գործարանից գնում էք բրիչներ, կացին, գիւրանդի, դանակ, շոր և այն բոլորը, ինչ ձեզ պէտք է գալիս. ինչ կասէք միլիօնաւոր տարիներ առաջ կային այդ գործարանները, որպէսզի այն ժամանակւայ մարդիկն էլ գնէին և գործադրէին:

—Ո՛չ,— գոռաց մէկը:

—Իհարկէ ոչ,— շարունակեց վարժապետը: Հին ժամանակ այժմւայ եղածներից ոչ մէկն էլ չկար: Միակ մարդն էր, որ կենդանիների ու զազանների հետ գիշեր ցերեկ անտառներում, դաշտերում, ժայռերի խոռոչներում ապրում էր իւր համար, առանց բնակարանի, առանց հագուստի և առանց գործիքների: Բնութիւնն էր նրա բնակարանը և նա անձրև թէ արև ժամանակը շրջում էր բաց երկնքի տակ և իւր համար մի կտոր ուտելիք գտնում:

Գիւղացիները այսպիսի չ'լսած խօսքից աւելի ու աւելի սկսեցին հետաքրքրւել և վարժապետը տեսնելով այդ աւելի վստահ շարունակեց իր պատմութիւնը:

«Այդ ժամանակ մարդիկ շատ տգէտ էին, նրանք ապրում էին աշխարհի տաք մասերում, առաւօտից մինչև երեկոյ թափառում էին այս ու այն կողմը, կերակրւում էին պտուղներով, բոյսերի արմտիքներով և կենդանիների ու թռչունների մսով: Ցերեկը մի տեղից միւսն էին անցնում և որտեղ մութը վրայ էր հասնում, այնտեղ էլ գիշերում էին կամ ծառի խոռոչում, կամ ժայռի փշակում: Իսկ տաք ժամանակ բաց երկնքի տակ, բայց այնուամենայնիւ այնպիսի տեղերում, որտեղ անմատչելի էին և ապահով վայրի զազաններից: Այդ հանգամանքն էր պատճառ, որ այն ժամանակ մարդիկ լաւ գիտէին թէ տաքւայ ո՞ր ժամանակը, ո՞ր պտուղը ո՞ր



տեղ է հասնում, որ թուշունը, կամ որ կենդանին որ-  
տեղ է շատ ապրում: Մարդիկ անընդհատ ճանապար-  
հորդութեան մէջ էին և իրենց այդ շրջագայութեան  
ժամանակ ապրում էին խմբերով: Նրանք իրենց սնուն-  
դը միացեալ ոյժով էին գտնում: Ոչ մի գործիք չունէին,  
Ծառից պտուղները քաղելու համար կամ բարձրանում  
էին ծառը քաղում, կամ քարի ու փայտի օգնութեամբ  
ծառից ցած թափում: Նրանց մշտական գործիքներն  
իրենց ատամներն էին և ձեռքերը, իսկ ձեռքերի վրայ  
էլ մատներ ու եղունգներ:

«Մատներով նրանք փորում էին բոյսերի արմը-  
տիքները և այդ արմտիքներով կերակրում, կամ թէ չէ  
կեղև ունեցող պտուղներն ատամներով ջարդում և մի-  
ջուկը ուտում: Պտուղներից շատերը, օրինակ տաք եր-  
կրի ընկոյզը կամ արքայակաղինը ջարդելու համար  
շատ անգամ նրանց ատամները անզօր էին: Ահա այդ  
պատճառով նրանք դիմում էին քարերի օգնութեանը:  
Պտուղը դնում էին մի քարի վրայ և մի ուրիշ քարով  
վերևից խփում: Ներքևի քարը փոխարինում է նորա  
վերին անշարժ ծնոտին, իսկ վերին շարժական քարը  
մարդու ստորին շարժական ծնոտին: Ահա այդ երկու  
քարերը հիմք են դնում մի գործիքի, որը ժամանակին  
զարգանալով դառնում է մեր երկանաքարը, ջրաղացը  
և սրտնց այլ կատարելագործւած տեսակը, որը դժ-  
բաղդաբար մեղանում գործ չեն ածում:

«Այդպիսի քարեր թափառող մարդիկ չ'նայած  
ամեն տեղ կարող էին գտնել, բայց այնուամենայնիւ  
նրանք իրենց հետ տանում էին այդ քարերը, մանա-  
ւանդ խփելու քարը, որովհետև ինչպէս դուք էք ասում,  
ամեն քար բթնիքին չէր գալիս: Երկար գործածութիւ-  
նից քարերը կամ մաշւում էին իրար քսելով, կամ

ջարդւում էին խփելուց, և երկու դէպքում զանազան նոր  
ձևեր էին ստանում. որոնք աւելի էին յարմար գործա-  
ծութեան համար: Ըստ անգամ քարը քարին քսելուց  
մի կողմը սրւում էր և մարդիկ այդ բանը շատ լաւ էին  
նկատում և հասկանում: Այդ պատճառով նրանք իրենք  
սկսեցին քարը քարին քսել, կամ մէկով միւսին խփել  
և այդպիսով բոլորովին պատահաբար սովորել իրենց  
ցանկացած ձևով քար ստանալուն: Այդպիսով նրանք  
սկսեցին քարի նոր նոր գործիքներ շինել ջարդե-  
լու, աղալու և նոյնիսկ կտրելու համար: Այսպէս օրի-  
նակ. սրած քարը նրանք ամրացնում էին որևէ փայ-  
տի վրայ, ծառերի կամ բոյսերի կեղևով և դարձնում  
էին գործածութեան աւելի յարմար գործիք: Այդպիսով  
եթէ կապւած քարը տափակ սուր վերջաւորութիւն ու-  
նէր, ծառայում էր որպէս ուրագ. կամ կացին, իսկ ե-  
թէ բուրժ վերջաւորութիւն ունէր, այն ժամանակ ծա-  
ռայում էր որպէս մուրճ: Ուրագը կամ կացինն էլ շատ  
ժամանակ ծառայում էր որպէս բրիչ կամ քուռկ:

«Բայց մարդիկ միայն քարեայ գործիք չէին գործ  
ածում: Նրանք փայտեր էլ էին գործ ածում, որոնցով  
հեշտութեամբ գետինը փորում էին: Քարի գործիքը  
շատ անգամ աւելի յարմար էր այդպիսի փայտերի վրայ  
կապել, որոնք հէնց առաջուց բրիչի ձև ունէին: Այդ  
փայտերը մեծ մասամբ երկու ճիւղով փայտեր էին, ո-  
րոնցից մէկը ծառայում էր որպէս կոթ, իսկ միւսը  
քարի ծայրով փորելու համար էր ծառայում: Այդ ձևով  
այս վերջի մասին սրած քարն աւելի դիւրին էր ամ-  
րացնել և աւելի յարմար էր գործ ածելու: Այդպիսով  
այն ժամանակւայ մարդիկ հիմք դրին այժմւայ գութա-  
նին, որի նախնական ձևը մասամբ նման էր մեր այն-  
օրւայ արօրներին: Այդ գործիքները նրանք գլխաւորա-



պէս գործ էին ածում արմատներ փորելու, պտուղ ջարդելու. իսկ աւելի ուշ ժամանակներն էլ ցանքս անելու համար:

«Մենք արդէն տեսանք, որ այդ ժամանակ մարդիկ ապրում էին անտառներում, լեռներում, ձորերում, ուրեմն ե՞լքջապատւած էին իրենց համար վտանգաւոր զազաններով, որոնցից հարկաւոր էր պաշտպանւել: Այժմ արդէն նախկին քարերի ու փայտերի տեղ աւելի ամուր գործիքներ մուրճեր, կացիններ ունէին, որոնցով շատ հեշտութեամբ կարող էին պաշտպանւել գոնէ սովորական զազաններից: Այժմ նրանք պաշտպանւելով հանդերձ, միեւնոյն ժամանակ սննդի տէր էին դառնում, սպանելով վտանգաւոր զազաններ և անվտանգ կենդանիներ: Զիշտ է. ամեն տեղ եղած գործիքները բաւականութիւն չէին տալիս և ահա այդ պատճառով մարդիկ սկսեցին նոր նոր գործիքներ շինել. Ստամոքսի և պաշտպանւելու կարիքը նրանց ամեն բան անել էր տալիս:

«Երկար փայտի ծայրին նրանք ամրացնում էին սրւած քարը և ստանում էին այդպիսով մի նոր գործիք, բոյորովին պատրաստ գործադրութեան և նման մեր այժմւայ նիզակին, որը գործադրելու համար հարկաւոր էր այդ գործիքը ոյժով խրել կենդանու մարմնի մէջ և կամ հեռուից շեշտակի կերպով ձգել կենդանու վրայ: Բայց չէ որ ամեն կենդանու մօտենալը հեշտ չէր, իսկ հեռուից շարժելն էլ չափազանց դժւար: Մարդկանց ոյժերն չէին բաւականանում գործիքն ուղիղ և շեշտակի առաջ նետել. Դորա համար մարդիկ դիմում են զանազան միջոցների: Նրանցից ոմանք մի եկրորդ փայտ համարեայ նոյն երկարութեամբ դէմ էին տալիս նիզակին գուգահեռական (նոյն հաւասարութեամբ, փայ-

տին կողք կողքի), նիզակի ծայրին, քարի մասի մօտ եղած աւելորդ բլթակին (դօղունի պէս) և այդպիսով նետելու ոյժ առաջացնում. Ուրիշները աւելի լաւ միջոց են ստեղծում: Նրանք վերցնում են ծառերի կճեպներից ինչպէս ուռենու, թթենու և այլ նման ծառերի փափուկ կեղևից բարակ ու երկար ձող, թելի նման (իհարկէ անհամեմատաբար հաստ), մի ծայրն ամրացնում են երկար հաստ ճիպոտի մի ծայրին, իսկ միւս ծայրը միւս ծայրին և այբան են ձգում ու կապում, որ ճիպոտը կեռանում, կիսակլոր ձև է ընդունում: Այդ գործիքը նախնական աղեղն էր, որ ժամանակին աւելի լաւ և այն էլ երկաթից էին շինում: Այդ ձևով են շինում հէնց այժմ մեր երեխաները, աշակերտներից մի քանիսը, իրենց խաղի աղեղները: Այդ շինւած աղեղի վրայ յարմարեցնում են նախկին նիզակը, որն այժմ աւելի կարճացրել և բարակացրել էին և որն այժմ արդէն նետ էր կոչւում, նման մեր այժմւայ երեխաների նետերին: Նետի ետևի բութ մասը կապնում էին աղեղի թելին, իսկ սուր ծայրը աղեղի ճիպոտի կողքից առաջ էր ուղղւում: Ուժով ձգում էին աղեղի թելը կամ լարը, որը բարելւով ձգւում էր և բաց թողած ժամանակ նիզակին ուժով առաջ էր բրդում և աւելի հեռու ձգում: Այդպիսի ուժով նետը սլանում և ցցւում է կենդանու մարմնի մէջ: Նրա ծայրի սուր քարը թաղւում էր մարմնի մէջ և այլևս դուրս չէր գալիս, այդպիսով էլ կենդանին կարճ ժամանակից յետոյ ուժաթափ էր լինում և ընկնում: Այժմ արդէն գործի էին դնում սուր զանակները կամ կացինները:

«Այժմ արդէն մարդիկ ապահով էին և սննդի համար էլ շատ միւս կարող էին գտնել:



## 4.

«Մարդիկ բոյսերի զանազան մասերով կերակրւելով սկսում են հետազօտել նաև այդ բոյսերի կեանքը: Այդպիսով նրանք շուտով նկատեցին, որ բոյսերի վրայ կան առանձին հատիկներ, կամ հէնց իւր ժողոված պտուղներն են, որոնք ընկնելով հողի վրայ մի քանի ժամանակից յետոյ բուսցնում են նախկինի նման բոյս: Այդ ճանաչում էին նրանից, որ դուրս եկած փոքրիկ բոյսի գլխի գետնից դուրս էր գալիս նաև հատիկի կըճէպը: Մարդկանց ուշադրութեանն են ընկնում գլխաւորապէս այնպիսի բոյսեր, որոնց պտուղն աւելի շատ է, ինչպէս բրինձը, եգիպտացորենը և այլն, որովհետև միմիայն այդպիսի բոյսերից նրանք կարող էին իրենց բաժինը վերցնելուց յետոյ, աւելորդը գետնին թափւած թողնել: Բնական օրինակից ոգևորւած մարդիկ հաւաքած սերմն թափում էին իրանց ուզած տեղը, յուսալով՝ որ կ'աճեն և պտուղ կտան, նրանց յոյսերն իհարկէ յաճախ արդարանում են և ձգած սերմը աճելով նոր պտուղ է տալիս աւելի մեծ քանակութեամբ: Այս վերջին հանգամանքն աւելի է զրաւում այդ ժամանակւայ սննդի տեսակետից ազան մարդկանց, որոնք սկսում են սերմ ցանելով պարապել: Այդպիսով նրանք ժամանակի ընթացքում սկսում են ցանել զարի, ցորեն, հաճար, նայած իրենց ապրած տեղին: Բայց չպէտք է մոռանանք, որ նրանք ապրում էին տաք մասերում, որտեղ համարեա ամեն տեսակ բոյս կարող էր աճել:

«Շուտով մարդիկ նկատում են, որ իրենց ձգած սերմն աւելի լաւ է աճում այնպիսի տեղերում, որտեղ հողը փափուկ էր և հեշտ էր խոնաւանում: Այդ կարևոր հանգամանքը նկատելուց յետոյ նրանք սկսում են սերմ

ձգելու տեղը փոխել, իսկ այդ փոքրիկ նրանց համար հեշտ էր, որովհետև փոքրիկ համար յարմար գործիքներ ունէին: Նրանց հնարած արօրը, բրիչը, քլունկը իրենց ծառայութիւնն էին մատուցանում և գործադրութեան մտնելով կատարելագործում, նոր ձև են ստանում և գործադրութեան աւելի ևս յարմար դառնում:

«Այժմ արդէն մարդիկ ձգած սերմից մեծ քանակութեամբ արգիւնք էին ստանում: Դորանից յետոյ նրանք միջոցներ էին փնտրում հացահատիկներից մի քանիսի, ինչպէս՝ բրնձի, գարու, եգիպտացորենի կճեպները մի կողմ շարտելու համար: Նրանք այդ միջոցներն ունէին: Մեր ասած քարով ջարդում էին հատիկը կամ թէ չէ աղում: Այդ գործիքների օգնութեամբ մանրացրած հացահատիկը կճեպից ազատ էր և մանրացրածը մարդիկ դործ էին ածում ջրի մէջ շաղախած, որպիսի զրութեամբ ուտելն աւելի հեշտ էր: Յետագայում այդ սննդի հետ խառնում էին նաև քաղցր նիւթեր զանազան պտուղներից վերցրած: Այսպիսով արդէն խմորը պատրաստ էր, հարկաւոր էր միայն կրակ հաց թխելու համար:

«Մինչև այդ մարդիկ իրենց գործածած գործիքները, ինչպէս տեսաք, շինում էին կամ քարից կամ փայտից: Բայց իրենց համարեա մշտական շրջադայութեան ժամանակ նոր նոր նիւթեր գտան, որոնք աւելի ամուր էին քարից: Այդպէս օրինակ բրօնզը, երկաթը, պղինձը: Այն շրջանը, երբ մարդիկ քարից շինած գործիքներով էին աշխատում, կոչւում էր քարեայ շրջան: Քարի գործիքները բրօնզի գիւտից յետոյ դարձան բրօնզեայ, որից և գործիքներով աշխատելու ժամանակաշրջանը կոչւում է բրօնզեայ շրջան կամ բրօնզէ դար:

«Այժմ մարդիկ թեթևացրել էին իրենց գործը և նրանք մետաղեայ գործիքներով դիմադրում էին իրենց



համար վնասակար կենդանիներին, որոնցով միևնույն ժամանակ իրենց սնունդն էին հեշտութեամբ հայթաթութում: 25 որ հնումը տարբերութիւն չէին գնում կենդանիների մսի մէջ:

«Մարդիկ դարձեալ կերակրում էին բոյսերով և կենդանիների ու թռչունների մսով: Բուսեղէն կերակուրը հեշտ էր պահել, իսկ մսեղէն ուտելիքները՝ մի առանձին դժւարութիւն էր ներկայացնում, որի համար մարդիկ սկսեցին նոր նոր միջոցներ հնարել: Նոր գտնւած գէնքերի ու գործիքների օգնութեամբ նորա որսում էին աւելի մեծ կենդանիներ, որոնց մսով թէ կերակրում էին և թէ աւելացնում: Այս վերջին գէպքում մարդիկ հեշտութեամբ նկատում էին, որ մնացած միսը փթում էր և գործածութեան անընդունակ դառնում: Ահա այդ պատճառով նրանք ջանք էին թափում եղածը կլանել, որով երբեմն չափից դուրս կուշտ էին լինում, երբեմն էլ բաղցած: Մի հանքամանք, որը պատճառ է լինում աւելի միսը անվնաս պահելու համար միջոցներ հնարելուն: Ամենօրեայ փորձից մարդիկ տեսնում էին, որ երբ միսը կտրում էին որեւէ սուր գործիքով, մսի կտորները տաքի ազդեցութեան տակ չորանում էին, որով աւելի երկար ժամանակ կարելի էր պահել: Միւս կողմից այդպիսի կտորները կարելի էր աւելի երկար պահել և մանաւանդ մի տեղից միւսը տանել իրենց շրջագայութեան ընթացքում: Այդպիսի չոր կտորները ջրի մէջ հեշտութեամբ էլ փափկանում էին: Ահա այդ ձևով մարդիկ աւելի միսը պահում էին ապագայի համար: Հէնց այժմ էլ այդ ձևը գործադրւում է վայրենիների մէջ, իսկ սովորական գործածական ապուխտը համարեա այդպէս են պատրաստում: Չորացրած միսը նախնական ժամանակներում մարդիկ պահում էին թամբերի տակ, որտեղ

ձիու տաքութեան ազդեցութեան տակ փափկանում և ուտելու համար մատչելի էր դառնում:

«Բայց այս բոլոր գիւտերը դեռ ևս բաւական չէին նախնական մարդկանց ապրուստի համար: Նրանց կենցաղը մասամբ կարօտ էր նոր նոր գիւտերի, որոնց միջոցով մարդիկ կարող էին բարեփոխել իրենց սնունդը, իրենց բնակարանը և իրենց ամբողջ նիստ ու կացը:

«Նրանց կարիքների մէջ ամենամեծ տեղը բռնում էր կրակը, որի էութիւնը բոլորովին անծանօթ չէր բնութեան ծոցում ապրող մարդուն: Նրանք յաճախ տեսնում էին, թէ ինչպէս կայծակի ժամանակ այս կամ այն ծառը այրւում էր, որի ժամանակ իրենք զգում էին նոյն տաքութիւնը, մասամբ նոյն լոյսը, ինչ որ արեւ ժամանակ: Ահա այդ պատճառով տաքի և լոյսի բաշխող արեգակից բացի նրանք ճանաչեցին նաև իրենց համար անծանօթ մի աղբիւր, որից կարելի էր ստանալ նոյն տաքն ու լոյսը: Նախնական մարդիկ իրենց ամենօրեայ կեանքից տեսնում էին որ փայտի կամ քարի մի կտորը մի ուրիշ կտորի հետ արագ շրփելուց շփած տեղը տաքանում էր: Ժամանակի ընթացքում այդ միջոցը մարդկանց նոր գիւտ տուաւ: Նրա կու փայտի կտորներ մէկմէկու շփելուց փայտերի շփած տեղը սոստիկ տաքանալով կրակ առաջացաւ, որից մարդիկ այնպէս չէին վախենում, ինչ որ կայծակի միջոցով յառաջացած կրակից: Այսպիսով նրանք միաժամանակ թողին նաև իրենց երկիւղը կայծակից առաջացած կրակի վերաբերմամբ:

«Ինչպէս էին նրանք կրակ պատրաստում: Ահա ամենահետաքրքիր միջոցը, որն այժմ գործ են ածում վայրենիները: Մարդիկ բնութեան մէջ մտքով աւելի սուր են բան միւս բոլոր կենդանիները: Կրակի առա-





ջանալու մասին գաղափար ստանալով միևնույն ժամանակ նրանք հնարում են կրակ յառաջացնելու աւելի հեշտ միջոց: Դա մի գործիք է, որը բաղկացած է երկու գլխաւոր մասից, Առաջին մասը փայտի հաստ կտոր է հորիզոնաձև գետնին դրած, որի վրայ կային փոքրիկ ծակեր կամ փոսիկներ: Երկրորդ մասը մի ձող էր, ծայրը սուր, որ մտնում էր ծակերից կամ փոսիկներից մէկի մէջ: Այդպիսի դրութեամբ մարդիկ իրենց ոտներով փայտի կտորներ ամուր պահելով ծակի մէջ կանգնեցրած ձողը ձեռքով արագ պտտեցնում էին, որից անցքի մէջ արագ շփում առաջանալով, առաջանում էր նաև տաքութիւն, որից և փայտն այրւելով՝ կրակ: Այս ձևով առաջացած կրակից խոտ կամ չորացած խոփը վառելով անագէն հրդեհներ էին կարող պատրաստել: Սկզբում այդ գայլիկոնաձև (բուրդուաձև) ձողիկը ձեռքով էին պտտեցնում, աւելի ուշ ժամանակներում երկար թելի կամ կաշւի բարակ ձողի միջոցով, ինչպէս այժմ դանակ կամ ածիլի սրելու գործիքը: Կրակ առաջացնելու մասին խօսելուց մենք չպէտք է մոռանանք մի կարևոր հանգամանք: Դա այն է, որ մարդիկ ապրում էին երկրի տաք մասերում, որտեղ աւելի շատ տաքութիւն կար: Մի բան, որից գուրկ էին երկրի միւս մասերը: Այդ պատճառով էլ կրակի գիւտը տաք մասերում է լինում, որին շատ է նպաստում նաև եղանակի տաքութիւնը:

«Կրակ յառաջացնելն ի հարկէ շատ ջանքեր էր պահանջում: Զատ անգամ գործիքը պտտեցնելու համար աշխատում էին ոչ թէ մէկ, այլ մի քանի մարդիկ: Այդ դժարութիւնն ի նկատի ունենալով մի անգամ պատրաստած կրակից պահում էին յաջորդ անգամայ համար, մոխրի մէջ թաղելով ինչպէս ձմեռը մեր գիւղի-

րում, կամ թէ չէ հէնց դիշեր ցերեկ վառած էին պահում օջախը: Կրակն այն ժամանակաւ մարդկանց համար մեծ հարստութիւն էր, որի գողանալուն կամ փչացրնելուն պատրաստ էին ոչ միայն կենդանիները, այլ և հէնց իրենց հման մարդիկ, որոնք կարող էին համարձակ գողութեան դիմել: Ահա այդ պատճառով կրակի պահեստը չկորցնելու և գողանալ չտալու համար յատուկ մարդիկ էին նշանակւում, որոնց պարտականութիւնն էր կրակն անվտանգ պահել: Որովհետև կրակը մարդկանց դիւրութիւն էր տալիս տաքանալու, ինչպէս յետոյ կտեսնենք պտուղներ խորովելու, և մանաւանդ կրակը բոցավառելով վնասակար գաղաններից պաշտպանւելու, ուստի համարւում էր երկնքի տւած, մի աստուածային պարգև, որի համար էլ մարդիկ սկսում են պաշտել: Իսկ կրակը պահպանող պաշտօնեաներն էլ համարւում են աստուծոյ պաշտօնեաները կամ ծառաները:

«Ինչպէս կրակ պահպանողներն էին տարբերւում միւսներից, այնպէս էլ կրակ պահելու տեղերն էին որոշւում և տարբերւում միւս տեղերից: Անձրեից և այլ վտանգից կրակը պահելու համար, իրենց այդ նոր և սրբազան հարստութիւնը պահելու համար մարդիկ կրակը դնում էին փոսի մէջ շուրջը ձողեր տնկում, այդ ձողերի վերին ծայրերը մօտեցնում միմեանց կապում, և այդ գմբեթաձև ձողերի շուրջը ծառերի սաղարդ ածում, իսկ աւելի ուշ ժամանակներում այդ ձողերի վերայ ձգում էին իրենց որսած կենդանիների մորթը: Այդ տնակը մի կողմից անցք ունէր, որը ծառայում էր որպէս մուտք և որպէս երդիկ: Այդպիսի կրակատները ժամանակի ընթացքում մեծացնում էին, աւելի հաստատուն հիմք դնում և դորա մէջ պատսպարում ոչ միայն կրակը, այլ և իրենց, մանաւանդ որ՝ ինչպէս ասացինք,



կրակից վտանգաւոր զազաններն ու վայրի կենդանիները հեռու էին փախչում: Ահա այս ձևով տասնեակ հազարաւոր տարիներ առաջ հիմք է դրւում ներկայիս մի քանի յարկանի փառահեղ պալատներին:

«Այժմ արդէն մարդիկ իրենց բաղաւոր էին զգում, ունէին գործիքներ, բնակարան և կրակ: Վերջինս մանաւանդ նոր նոր գիւտերի հիմք է դառնում: Այսպէս օրինակ. կրակի վրայ մարդիկ խորովում են պտուղներ, հացահատիկներ, միս: Խորովելու համար երեք զլխաւոր ձե կար: Առաջին ձեւը, որ միսը կարելի էր հէնց կրակի բոցերի մէջ խորովել, երկրորդ՝ որ հանդարտած և վառած ածուխ դարձած կրակի վրայ խորովել և երրորդ՝ հէնց ծուխի մէջ: Զուտով աւելացաւ և մի չորրորդ ձեւ: Ժամանակի ընթացքում մարդիկ տեսան, որ կրակը հանգչելուց յետոյ տակը եղած կամ մօտի քարը սաստիկ տաք է, և երբ փորձեցին մօի կտոր վրան դրել, տեսան, որ կարճ ժամանակից միսը խորովեց և դարձաւ բոլորովին նոյնը, ինչ որ կրակի վրայ:

«Միս խորովելու այս չորրորդ միջոցը մարդկանց զիւրութիւն է տալիս հիմք դնել փառարանի, որի վրայ աւելի հեշտութեամբ կարող էին խորովել միս, պտուղներ և արմտիքներ: Այս միջոցն աւելի լաւ էր մաքուր պատրաստելու համար և մարդիկ հաւասարապէս սկըսում են գործադրել:

### 5.

«Մարդիկ բացի ցամաքային կենդանիների մօից, կերակրւում էին նաև ծովային կենդանիների մսով, մանաւանդ ձկներով, որի համար և սկսեցին պարապել ձկնորսութեամբ: Դեռ նախ քան կրակի գիւտը մարդիկ կերակրւում էին ձկներով, բայց նրանք սպասած համը

չունէին: Եփելու եղած միջոցներն անկարող էին ձկանը իւր իսկական համը տալ: Դորա պատճառն այն էր, որ ձկներն արեւի սուռա շատ դժւարութեամբ էին չորանում, միւս կողմից էլ, առանց աղի անդուրեկան էր: Կրակի գիւտը զիւրութիւն տւաւ մարդկանց ձկներ ևս խորովել, որպիսի ձևով աւելի համեղ էին: Այս հանգամանքը զրաւեց ազատ մարդկանց և նրանք սկսեցին աւելի մեծ քանակութեամբ ձուկ որսալ:

«Ինչ ձևով էին ձուկ որսում: Դա անշուշտ կհետաքրքրէ ձեզ բոլորիդ: Եւ իսկապէս հետաքրքիր էլ է. յետոյ մենք կտեսնենք, որ ձուկ որսալու կարիքը մարդկանց նոր նոր գիւտեր է տալիս, որոնք պակաս օգնութիւն չեն հասցնում մարդկանց ապրուստին: Դուք գիտէք, որ անձրևների ու հեղեղների ժամանակ գետերը յորդանալով դուրս էին գալիս իրենց ափերից և ողողում ընդարձակ դաշտեր: Գիտէք նաև, որ անձրև ու հեղեղ ժամանակները ջրի գոյնը շատ պղտոր է լինում և համարեա ցեխախառն: Բնական այսպիսի հանգամանքներում գետերը իրենց ափերից դուրս գալուց յորձանքի (լափու) միջոցով դուրս էին շարտում պղտոր հողախառն ջրից կուրացած ու խեղդած ձկների ահագին բազմութիւն: Զատ անգամ էլ յորդացած գետակը իւր հունը մտնելուց յետոյ դաշտի վրայ էր թողնում նման ձևով խեղդած ձկներ, որոնք մարդկանց կերակուրն էին գառնում և որոնց ձեռք բերելու համար, մարդիկ մի առանձին զոհողութիւն չէին անում: Բացի այս բընական միջոցից մարդիկ արհեստական միջոցներ էլ դիմեցին: Այսպէս օրինակ, նրանք փոխելով գետերի ընթացքը ցամաքեցնում էին նախկին հունը, որտեղից հաւաքում էին անջուր մնացած և ջրի վերջին հոսանքից յետ մնացած ձկներ: Այս միջոցը ներկայումս էլ գործ են



ածում նոյն իսկ կրթւած մարդիկ: Հայերի մէջ ամեն տեղ, մանաւանդ լեռնային սրնթաց գետերից ձուկ բռնելուց, որը զանազան անուն է կրում «ճիւղ կտրել», «գետ ցամաքեցնել» և այլն:

«Երբեմն մարդիկ որոշ միջոցներով թունաւորում կամ պղտորում էին ջուրը, որպիսի միջոցը ևս պակաս զիւրութիւն չէր տալիս նրանց անկենդան ձուկ ստանալ: Բացի դորանից նախնական, միայն ուտելու ետեւից ընկած, մարդիկ սկսեցին զանազան դամբիւղներ պատրաստել դալար ոստերից, ճիւղտներից, ծառերի կեղևներից, որոնց սուղում էին ջրի մէջ, կարճ ժամանակից ջրի հետ դամբիւղ էին լցւում նաև ձկներ և դամբիւղ բռնողը յանկարծակի հանում էր ջրից դամբիւղը, որի միջից անցքերով ջուրը ցած էր թափւում, իսկ ձկները մնում էին դամբիւղի մէջ: Այդպիսի դամբիւղները ժամանակի ընթացքում փոխւում և ուռկան դառնում: Մարդիկ ցամաքային կենդանիների դէմ գործադրած գէնքերով էլ էին ձուկ որսում, մանաւանդ մեծ ձկներ, որոնք թէ ափի մօտ չէին գալիս և թէ որոնց հանելը դժւար էր: Այդպիսի ձկներին մարաղ մտած մարդիկ նետահարում էին և ապա նիզակով դէպի ափ բաշում: Այս վերջին միջոցը, նիզակի գործածութիւնը հիմք դրաւ մի գործիքի, որը կատարելագործւելով ներկայ կաթիլը դարձաւ (չանկալ):

«Ասացինք որ դամբիւղով ձուկ էին որսում: Ամեն անգամ երբ ջրից հանում էին թրջւած սամբիւղը և դրնում գետնի վրայ, գետնից կաւային հողը կպչում էր դամբիւղին և ծակոտիքները բռնում: Այդ աննկատելի ձևով խոնաւութեան և արևի տաքութեան ազդեցութեան տակ դամբիւղի ծակերը փակւում էին թրցած կաւով և արգելւում ջուրը դուրս թափւելուն: Այս հանգամանքը

մարդկանց զիւրութիւն է տալիս այդպիսի ամանով ջուր տաքացնել: Մի հանգամանք, որ յաջողութեամբ է պսակւում և դորանից յետոյ մարդիկ սկսեցին կաւէ ամաններ շինել, կրակի մէջ թրծել և գործադրութեան հանել: Սկզբում այդ ամաններն այնպէս էին պատրաստւում. ճիւղտներից գործած որևէ դամբիւղ ներսից և դրսից ծածկւում էին կաւէ շերտով, ապա դնում կրակի վրայ: Սաստիկ տաքութիւնից ցելը թրծւում էր, երկու շերտերի միջի ճիւղտներն այրւում և աւելի ևս տաքացնում, որով կաւն աւելի ևս ամրանում էր:

«Ամանի գիւտի հետ մարդիկ միևնոյն ժամանակ ծանօթանում են նաև ջրի տաքացնելու արևստի հետ: Ամանով ջուրը շատ անգամ նրանք անզիտակցաբար թողնում են արևի տակ, որից ջուրը տաքանում էր և այդպիսի ջուրը հիշտութեամբ էր փափկացնում իրենց ապխտամիսը, պտուղները (չորացրած) և այլն: Այս բնական փորձից յետոյ մարդիկ ամաններով ջուրը հէնց դամբիւղ-կաւերի թրծելու ժամանակ կրակի վրայ երբեմն տաքացնում էին և գործադրում, կամ թէ չէ նախօրօք թրծւած ամանի մէջ ջուր էին լցնում, ջրի մէջ էլ ձգում էին կրակի մէջ տաքացրած քարեր, որոնց ազդեցութեան տակ ջուրը տաքանում էր:

«Ձկնորսութիւնը և նրանից ստացած մի շարք գիւտերի մէջ մի կարևոր նշանակութիւն ունի նաև հետեւալ գիւտը, որը զարգանալով այժմ ամբողջ աշխարհին զարմանք է պատճառում: Մարդիկ ջրերի ափին ապրելով ամեն ժամանակ շատ լաւ էին նկատում, որոշ իրեր խորասուզւում են ջրի ներսը, որոշ իրեր կարողանում էին մնալ ջրի երեսին և լողալ: Պարապելով ձկնորսութեամբ և յաճախ դործ ունենալով ջրի հետ, երբեմն մարդկանց ոտները սայթաքելով ընկնում էին



ջրի մէջ և հեռանում ամից. այդ ժամանակ բացի իրենց շարժումներից նրանք ձեռք էին մեկնում ծովի վրայ լողացող ճիւղերի, հաստ գերանների և դրանցից բրդնելով դէպի ամի քշում: Այդպիսի հանգամանքներով նրանք շատ լաւ էին զգում, որ հէնց ձեռք են տալիս այդ փայտերին թէ չէ, իրենք աւելի թեթեւանում էին և որքան իրենց ոյժը ձգում էին այդ գերաններին, այնքան էլ հանգստանում և գերանների միջոցով դէպի ամի էին մօտենում: Մի շարք այդպիսի պատահական փորձերից և գերանների բարիքը տեսնելուց յետոյ, մարդիկ արհեստական կերպով գերաններ էին ձգում ծովի վրայ և գերանի վրայ նստած լողում ջրի վրայ, յաճախ միեկնոյն ժամանակ ձուկ որսում:

«Սկզբնական այդ գերանին աւելացնում էին մի քանի գերաններ, կապում միմեանց հետ և այդպիսով լաստ շինում, որը և միեկնոյն ժամանակ քամու ազդեցութեան տակ կարող էր արագ լողալ: Այդպիսի լաստերով մարդիկ հեշտութեամբ լողում էին գետի ընթացքն ի վայր և կամ լաստի վրայ նստած երկար ձողով գետի յատակին յենելով ամեն կողմ լողալ: Այդպիսի լաստերը ծածկում էին ցածի կողմից կենդանիների մորթով, որոնք աւելի ևս թեթեւացնում էին լաստը: Մենք հայերս էլ մի ժամանակ այդպիսի լաստեր ենք գործ ածել: Հայկ նահապետի և նրա յաջորդների ժամանակ Բաղդատի հետ առեւտուր անող հայերը Նփրատ գետի ընթացքն ի վայր լողալով Բաղդատ էին գնում և այնտեղից կաշիները էջերին բարձած ցամաքով հայրենիք գալիս, լաստի փայտերը այգտեղի ժողովրդին վաճառելով: Բացի այդպիսի լաստերից մարդիկ մտածեցին նաւակներ ևս պատրաստել, որի համար նրանք փորեցին գերանի ներսը, վերի կողմից որտեղ նաւորդը պի-

տի պատասպարել: Այդպիսի նաւակները տաշտերի ձև ունէին: Բայց չէ որ այդքան փորւածքը հաստ գերանների վրայ անագին աշխատանք էր պահանջում: Ժամանակի մարդիկ աշխատանքից չէին փախչում, միակ դրժաղդութիւնն այն է, որ նրանց գործիքները համապատասխան կատարելութեան չէին հասել: Ահա մի հանգամանք, որ նախնական մարդկանց դժւար կացութեան մէջ էր գնում, բայց նրանք արդէն հնարքների ու գիտեցի ճանապարհի գտել էին: Զատ լաւ հասկանալով կրակի ոյժը, նրանք այդպիսի փորւածքի չափն ու պահմանը որոշելուց յետոյ կրակը գնում էին փորելիք մասի վրայ և գերանն սկսում էր այրել: Այդ գործողութիւնը գուցէ օրեր էր տեւում, բայց իրողութիւնն այն է, որ մարդիկ հասնում էին իրենց նպատակին: Կրակը միալով լափում էր գերանի փորելիք մասը և խորացնում, որից յետոյ նախնական նաւակը պարաստ էր ծովի վրայ լողալու:

## 6.

«Բնութեան ծոցում ապրող կենդանիներն էլ մարդկանց նման սննդի կարիք էին զգում: Սրանց երկուսի սննդի մասամբ նմանութիւնը պատճառ էր դարձել կենդանիների մարդկանց մօտ ապրելուն կամ հէնց ուղղակի նրանց հետեւելուն: Մարդիկ այն օրից երբ յարմարութիւն չունէին իրենց սննդից աւելացածը պահել միւս օրւայ, համար ստիպւած էին այդ աւելորդութիւնները դէն շարտել, որից օգտւում էին շրջապատող կենդանիները: Ահա այս հանգամանքը պատճառ դարձաւ կենդանիների ընտանի դառնալուն, որոնցով ժամանակին մարդիկ այնքան մեծ օգուտներ ստացան և շարունակում են ստանալ:



«Ո՞ր կենդանիներն են ամենից առաջ մօտեցել մարդուն և ընտանի դարձել: Այս հարցին պատասխանելու համար ես ձեզ պէտք է յիշեցնեմ ներկայ ընտանի կենդանիների մի բանի բնորոշ գծերը: Այն կենդանիները, որոնք իրենց կերակուրը պատառոտում են կոչւում են պատառոտող կենդանիներ: Այդպիսի կենդանիներ են շները, գայլերը և ալլն: Դրանցից շները մի առանձին ախորժակ են ցոյց տալիս դէպի ոսկրը: Մարդիկ միշտ իրենց կերակրից աւելացած ոսկրները թափում էին որ և է տեղ, որի հոտից հաւաքւում էին շրները: Վերջիններս շատ անգամ իրենք հետևում էին մարդկանց և անհամբեր սպասում, թէ երբ աւելացած ոսկրը կամ միսը դէն կըշարտեն: Մարդիկ այդ լաւ էին տեսնում և շատ անգամ դուարճութեան համար ոսկր ձգելով, խաղում նրանց հետ: Շները սկզբում իհարկէ հեռու էին փախչում, բայց կրկին վերադառնալով, ճաշակելով ոսկրի քաղցրութիւնը, նրանք տեսնում էին, որ մարդիկ իրենց այլևս չեն հալածում, և կսում են մըտերմանալ այն մարդկանց հետ, որոնք իրենց ոսկոր էին ձգում: Մարդիկ նկատելով այդ և ինկատի ունենալով իրենց շահը, մտածում են, թէ՛ արդեօք չի կարելի շան միս ևս գործածել: Այդ նպատակով փորձեր են անում և ի վերջոյ որոշում են մեծ խմբերով շուն պահել, որի բարիքը մի այլ կողմից մարդու աչքին է զարնում: Շները մարդկանց մօտենալով անշուշտ հակառակ դիրք պիտի բռնէին այն վայրի գազանների վերաբերմամբ, որոնք սկզբից հակառակ էին շներին և մարդկանց համար վտանգ էին ներկայացնում: Այս երկրորդ հանգամանքը սերտ մտերմութիւն ստեղծեց մարդկանց և շների մէջ փոխադարձաբար, որը շարունակւում է մինչև այժմ: Մարդիկ վայելելով շների պաշտպանութիւնը

փոխադարձաբար խնամք տածեցին դէպի շները և ժամանակի ընթացքում դադարեցին նրանց միսն ուտելուց, որով շներն դարձան անձի և գոյրի պահապան կենդանիներ:

«Մարդիկ ժամանակի ընթացքում ծանօթանալով շների որսորդական ընդունակութիւններին սկսեցին, օգտուել նաև որպէս որսորդ: Շները ներկայումս էլ բազմաթիւ ծառայութիւններ են անում մարդկանց, որի փոխարէն վերջիններիս խնամքին ու երախտագիտութեանն են արժանանում:

«Բոլորովին շան նման ընտանի է դարձել նաև խոզը: Վերջինս, ինչպէս դիտէք, ամենակեր կենդանի է և մեծ հետաքրքրութիւն է ցոյց տալիս այն թափթփուկների վերաբերմամբ, որոնք մարդկային բնակչութեան արդիւնք են: Ժամանակի ընթացքում մարդիկ ճաշակելով խոզի իւղոտ մսի համը, աւելի մեծ խմբերով պահեցին և ներկայումս էլ բազմացնում ու աճեցնում են այդ կենդանու սերունդը, չնայած նրանք յայտնի են իրենց զգուշի կեղտոտութեամբ: Բայց նրանք հեշտութեամբ էին ընտանի դառնում: Ահա ամենամեծ խնդիրը: Համարեայ բոլոր կենդանիները չնայած առանձին սէր և հետաքրքրութիւն էին ցոյց տալիս դէպի մարդիկ, բայց շատ դժուարութեամբ էին մօտ թողնում նրանց: Մարդիկ ցանկանալով այդ անյարմար զրութեանը վերջ տալ, յաջողեցնում են անտառներից կամ դաշտերից բռնել այդ կենդանիներին, մանաւանդ փոքր հասակից և իրենց հետ պահպանելով փոքր ժամանակից սովորեցնել նրանց: Այս միջոցը պատճառ էր դառնում փոքր ձագերին մեծանալուց յետոյ չհեռանալ մարդկանցից: Իսկ մի անգամ ընտանեցած որևէ կենդանի արդէն բազմանալով մեծ խմբեր էին դառնում, սկզբում միայն



որոշ դժւարութիւններ ստեղծելով, ինչպէս օրինակ արուի կամ էգի կառիքը, որի համար ստիպւած էին վայրի եղածների հետ բոլորովին բնական ճանապարհով հանդիպել:

«Կային կենդանիներ ևս, որոնք մինչև այժմ էլ դժւարութեամբ են ընտանի դառնում և ցանկացած ժամանակ այնուամենայնիւ ցոյց էին տալիս իրենց վայրիութիւնը: Այդպիսի կենդանիներից էին բոլոր գիշակեր կենդանիները, որոնցից երկուսը միայն ընտանի դարձան: Դորանցից շան մասին արդէն ասացի: Երկրորդը կատուն էր, որը ոչ թէ մարդկանց շնորհիւ ընտանի դարձաւ, այլ մարդկանց թողած փշրանքներից օգտուելու հաւաքող մկների շնորհիւ: Մարդիկ իրենց բնակութեան տեղերում թափած պտուղների և աւելորդ սննդի պատճառով դէպի իրենց էին գրաւում գաշտային բազմաթիւ մկներ, իսկ սրանք էլ իրենց հաւիքը բերում էին իրենց երգեւալ թշնամուն, կատուին: Վերջինս շուտով մի առանձին ուշադրութեան է արժանանում մարդկանց կողմից, մասամբ իրենց փոքրութեան պատճառով անվնաս լինելու համար, մասամբ էլ մարդկանց համար վնասակար կենդանիներ հանդիսացող մկներին ոչնչացնելու համար:

«Այն օրից, երբ մարդիկ սկսեցին հողագործութեամբ, ցանքսով պարապել, դէպի իրենց գրաւեցին նաև մի շարք կենդանիներ, որոնք ժամանակին ընտանի դառնալով շատ մեծ ծառայութիւններ մատուցին նրանց: Այդպիսի կենդանիներ են այծը, ոչխարը, ձին, կովը, ուղտը, եղջերուն և շատ շատերը: Մարդու ձեռքի աշխատանքով ու խնամքով ցանքսի բոյսերը իրենց համեղ գրաւչութիւնն ունենալով, գրաւում էին այդ յիշածս կենդանիներին: Այդ կենդանիները ընտանի էին դառ-

նում հեշտութեամբ, շնորհիւ իրենց գիշակեր չլինելուն, ուրեմն և մարդու մօին որեւէ աչք չունենալուն: Այդ կենդանիները ընտանի դարձան ոչ թէ միեւնոյն տեղում և բոլորն էլ միասին ու միաժամանակ, այլ զանազան տեղերում, զանազան ժամանակներում: Դորա պատճառն այն է, որ այդ կենդանիները հաւասարապէս միեւնոյն տեղն ու միեւնոյն կլիման չէին օիրում: Բայց սրանցից ձին ու կովը կային ամեն տեղ և բաւական էր մի տեղ ընտանեցնէին, այդպիսի միջոցով կամ սերունդը կը տարածւէր նաև երկրի միւս, նոյնիսկ հեռւոր մասերը:

«Ինչպէս տեսաք մարդիկ այս բոլորից յետոյ կենդանի հարստութիւնների տէր էին և այդ կենդանիների մեծամեծ խմբերը պահելու համար նրանք քիչ քիչ թողնում են իրենց անընդհատ թափառումը և բնակութեան տեղեր հաստատում ոչ միայն իրենց համար, այլ և իրենց կենդանիների համար: Վերջիններիս համար մարդիկ բնակարաններ ու այլ պատսպարաններ են շինում, բոլորովին նման իրենց բնակարաններին: Սկզբում մարդիկ իրենց անասունների խմբերը մի տեղից միւսն էին քշում, աւելի խոտաշատ տեղ տանում: Բայց այժմ նրանք բնակատեղի են ընտրում որոշ ժամանակի համար, որը աւելի երկար էր տևում, երբ նոքա ցանքս են անում: Ահա այս ժամանակ մարդկանց համար նոր կեանք է ծնւում:

«Կրակի գիւտից յետոյ մարդիկ տաք երկիրներից ցրւում են և տարածւում աւելի բարեխառն երկրներ և այդպիսի շրջաններում բնակութիւն հաստատում: Նրանք այժմ տաք երկրից բարեխառն անցնելով և ընդհակառակը բարեխառն երկրից տաքն անցնելով շրջագայում էին անազին տարածութիւններ: Բարեխառն շրջաններ անցնելով նրանք անկարող էին հաւասարապէս տանել



այդ երկրի տարն ու ցուրտը. եւ ահա այդ պատճառով նրանք իրենց մարմինը ծածկում էին սկզբում փափուկ սաղարգով, ապա կենդանիների մորթով և աւելի ուշ ժամանակներում բրդէ գործածքներով: Իրենց այդ նոր փայրերը շրջագայելու ժամանակ նոր նոր հանքեր էին գտնում, որոնց շարքում նաև փայլուն մետաղներ, որոնցով զարդարում էին իրենց: Մի կողմից այդ մետաղները, միւս կողմից էլ թուշունների գանազան գոյնի փետուրները մանաւանդ տաք երկրում զիւրութիւն էր տալիս մարդկանց հարուստ զարդարանքներ կրել:

«Առաջին մետաղը, որ մարդիկ գտան, պղինձն է, որը բնութեան մէջ համարեայ թէ մաքուր ձևով է պատահում: Այդպիսի ձևով բնութեան մէջ մարդկանց համար պղնձի գտնելը առանձին դժւարութիւն չէր ներկայացնում: Այդ մետաղի կտորները նորա սկզբում չէին տարբերում սովորական քարից, բայց շուտով նկատեցին, որ այդ քարը մի առանձին բնութեան լուծուի ծաւելու, մինչդեռ սովորական քարը հալւածի ազդեցութեան տակ փշրւում էր: Չուտով նրանք մի այլ կարևոր յատկութիւն ևս նկատեցին: Այդ սովորական քարից չգանազանուող, մետաղաքարերը մարդիկ որեւէ կերպ գործ էին ածում: Դամ նրանց վրայ կրակ էին վառում, կամ թէ չէ սաստիկ տաքացնում ջուր տաքացնելու համար: Այս գործողութեան ժամանակ մարդիկ նկատեցին թէ ինչպէս այդ քարերը հալւում են տաքութիւնից: Պղնձի թէ սովորական քարերը և թէ հալւածքը գործ էին ածում որպէս զարդարանք:

«Պղնձի հետ բնութեան մէջ մարդիկ պատահեցին մի այլ մետաղի, որը համեմատաբար աւելի ամուր էր: Դա բրոնզն է, որ երկու կարևոր յատկութիւն ունէր, նախ ամուր լինելը, երկրորդ պղնձից աւելի հեշտ հալ-

ւելը: Բայց չէ որ բրոնզ առած հանքը կամ աւելի լաւ ասենք մետաղը առանձին չէ պատահում բնութեան մէջ: Դա պղնձի և մի քիչ էլ պողպատի հալւածքի խառնուրդն է: Ուրեմն բրոնզ ստանալու համար նախ և առաջ կարևոր էին այդ երկու մետաղները: Պղինձն արդէն ինչպէս տեսաք կար, մնում էր պողպատը: Այս վերջինս ճիշտ է, առանձին շատ կար բնութեան մէջ, բայց մարդկանց անյայտ էր: Պղնձի հետ այդ մետաղից երբեմն փոքր չափով պատահում է այժմ էլ: Ահա այս հանգամանքը միակ միջոցն է լինում ցանկացած մետաղն ըստանալ և նրանից բրոնզի գործիքներ շինել և ապա տարածել: Եւ որովհետեւ ինչպէս ասացի, այդ մետաղը հալւազիւտ էր, կնշանակէ մարդիկ ոչ թէ իրենց բոլոր բնակավայրերում այդպիսի գործիքներ էին շինում, այլ ստանում էին այն տեղերից, որտեղ այդ մետաղը պատահում էր:

«Համարեա միևնույն ժամանակ մարդիկ գտնում են նաև մի այլ մետաղ, երկաթը, որն աւելի կարծր էր, ծանր և որի գործածելու համար մեծ դժւարութիւններ կային: Չատ իրաւացի կերպով այն մարդիկ, որոնք պարագում էին երկաթի գործիքներ պատրաստելով, կախարդներ էին համարւում, ինչպէս ներկայումս էլ շատ երկրներում զարբիւններն յաճախ կախարդ մակդիրն են կրում: Երբ ևս խօսում եմ մետաղների մասին, հաւատացած եմ, որ ձեզնից շատերը անհամբեր սպասում են, թէ ինչ պիտի ասեմ անիծւած ոսկու մասին, որ մէկի ձեռքին կայ, միւսի ձեռքին ոչ, Գուցէ յիշածս մետաղներից առաջ մարդկանց յայտնի էին ոսկին ու արծաթը, որը գործ էր ածւում որպէս զարդարանք: Սըրանից մօտ 450 տարի առաջ երբ եւրոպացիները Ամերիկան գտան, տեղի վայրենիները զարդարւած էին ոս-



կու և արծաթի դարդարանքներով և իրենց ամբողջ կենցաղով նման իմ նկարագրածին:

Այս բոլոր գիւտերով մարդիկ արդէն բաղդաւոր էին և նոր նոր գիւտեր էին անում: Այս բոլորից յետոյ նրանք գտնում են անտառներում ծառերի փշակում մեղրի բնական փեթակ, մեղրով լի, որից սովորում են մեղուն ընտանեցնել և մեղր ստանալ, իսկ սրանից էլ քաղցր խմիչքներ պատրաստել: Բնական խաղողից մարդիկ քամելով հեղուկ մասը գինի են պատրաստում, խաշխաշից մի տեսակ թմրեցնող խմիչք: Իսկ ծխախոտը իսկական բոյս էր, որը ծխում էին և գինու նման ծխախոտի ծուխն էլ զոհաբերում էին իրենց աստուածներին:

«Ես այս երեկոյ վերջացրի իմ զրոյցը, շարունակութիւնը մնայ մի այլ անգամ, երբ կխօսիմ ընտանիքների, պետութիւնների կազմելու մասին:

Գիւղացիները ուրախութեամբ ընդունելով վարժապետի ասածը, որոշելով հէնց միւս օրը շարունակել, ցրեցան իրենց տները:

# 7.

Կիւրակի օրն երեկոյեան դպրոցի սենեակը կրկին լցել էին գիւղացի տղամարդիկ և կանայք, նախորդ օրւանից աւելի մեծ թւով: Վարժապետի անցեալ օրն արած հետաքրքիր պատմութեան շարունակութիւնն այսօր շատերին էր գրաւել և գիւղացիք համարեա բոլորն էլ լսելու էին եկել: Երեխաներն անգամ ներսը տեղ չլինելու համար խմբւել էին լուսամուտների քառի և պատշգամբում մէկ մէկու հրհրելով հաղիւ էին տեղ գտնում: Երբ բոլորը տեղաւորւեցան, վարժապետը սկսեց իր պատմութիւնը:

«Անցեալ անգամ ես պատմեցի, թէ մարդիկ ինչ գործիքներ ու կահ կարասիքներ ունէին և թէ ինչով էին պարասում: Այս անգամ ես ձեզ պիտի պատմեմ, թէ մարդիկ այն ժամանակ ինչ յարաբերութեան մէջ էին: Սա աւելի քան կարեւոր է այժմ մեզ համար: Մենք ամեն օր լրագրներում կարդում ենք զանազան յօդւածներ, սրոնց հիմքը իմ այսօրւայ պատմելիք նիւթը կարելի է համարել: Դուք բոլորդ էլ գիտէք, թէ ներկայումս ինչ ասել է ընտանիք, ցեղ, ազգ, պետութիւն և այլն: Կային արդեօք դժբա մեզնից հազարաւոր տարիներ առաջ: Ահա հէնց այս հարցի պատասխանն է, որ այս երեկոյ ձեզ պիտի պատմեմ:

«Անցեալ անգամ ես ասացի, որ մարդիկ ապրում էին խմբերով: Ինչո՞ւ, դժբա պատճառն ասացի: Ոչ: Ես պատմեցի որ մարդիկ այդ ժամանակ ստիպւած էին սընունդ գտնել, վայրի գազաններից պաշտպանւել, որի համար մի մարդու ոյժը բաւական չէր: Ահա այդ պատճառով մարդիկ իրենց ոյժերը միացնում են միմեանց, նոքա միասին էին շրջում և միմեանց օգնում: Գրակ պատրաստելու մասին խօսելիս ասացի, որ բուրդուածն փայտը պտտեցնելու և ցածի կտրոնը պահելու համար շատ անգամ մի բանի մարդիկ էին աշխատում: Զուկ որսալուց, նաւակներ շինելուց, որսորդութեան և հողագործութեան, ինքնապաշտպանութեան ժամանակ մարդիկ միանում էին զանազան խմբերի և միասին իրենց աշխատանքն առաջ տանում: Այդպիսի աշխատանքները վերջացնելուց յետոյ նրանք շատ անգամ ցրւում էին, մէկ էլ նորից հաւաքւելու համար, կամ թէ չէ յաճախ շարունակում էին իրենց խմբովին ապրելը: Այս խմբովին ապրելը ամենահին ժամանակներից մարդկանց մի ընդհանուր ընտանիք էր կազմել և նրանք, այդ ընտա-



ներքի անդամները ոչ միայն աշխատանքի ընկերներ էին. այլ և արիւնակիցներ. Սակայն այդ ժամանակւայ արիւնակցութիւնը խիստ տարբերում էր մեր այժմւայ արիւնակցութիւնից: Այդ տարբերութիւնը լաւ հասկանալու համար մենք պէտք է իմանանք, թէ ինչ բան էր և ինչպիսի կազմ ունէր այդ ժամանակւայ ընտանիքը, որը նոյնպէս տարբերում է մեր այժմւայ ընտանիքից: Ներկայումս մենք սովորաբար ընտանիք ենք անւանում տղամարդուն, կնոջը, նրանց երեխաներին, երբեմն էլ նրանց պապերին ու տատերին: Բայց նախնական ընտանիքը նման չէր դորան և նրան ընտանիք էլ չէին կարող ասել:

«Շին ժամանակ մարդիկ ամուսնութիւն չէին ճանաչում: Նրանք ապրում էին համարեա ինչպէս կենդանիներ: Որովհետեւ ամուսնութիւն չկար, այդ պատճառով էլ տղամարդիկ բազմաթիւ կանայք ունէին, կանայք էլ բազմաթիւ տղամարդիկ: Նրանք բոլորը խառն էին: Որովհետեւ որոշ ամուսնութիւն չկար, ուստի չկար նաեւ որոշ արիւնակցութիւն: Քոյր ու եղբայրն անգամ չէին տարբերում և նրանց մէջ ամուսնութիւնը սովորական երեւոյթ էր: Ազգակցութիւնը որոշում էր միայն մօր և զաւակների մէջ, այն էլ զաւակների փոքր հասակում, հէնց որ նրանք չափահաս էին դառնում, ազգակցութիւնը կամ արիւնակցութիւնն էլ վերանում էր: Արիւնակցութիւնը հրապարակ էր գալիս այն ժամանակ, երբ մարդիկ աւելի խմբերով էին ապրում: Անցեալ անգամ ասացի, որ կրակի, սննդի, գործիքների համար մարդիկ մէկգմէկուց գոգութիւններ էին անում: Այս հանգամանքը մարդկանց մէջ ստեղծում էր ինքնապաշտպանութիւն և յարձակում: Մարդիկ այդ նպատակով նոյնիսկ երկու արիւնակից խմբեր կուի էին ելնում մէկ

մէկու գէմ: Այդպիսի կոիւնները ոչ թէ միայն իրենց ունեցած սեպհականութիւնը պահպանելու համար էր կամ միւսի սեպհականութեանը տէր լինելու համար, այլ և նրանք նպատակ ունէին մէկը միւսին նւաճել, ենթարկել տալ իրեն, ստրկացնել: Այդպիսի ստրուկներին կամ որպէս բանւոր անասուններ էին բանեցնում, կամ կարիք եղած ժամանակ կերակուր դարձնում: Ահա այսպիսի կոիւնների ժամանակ նրանք շատ անգամ նկատում էին, որ մօտիկ արիւնակիցները իրենց ֆիզիքական ոյժով թոյլ են, բան հեռու արիւնակիցները կամ ոչ արիւնակիցները: Բաւական էր որ մի որեւէ խմբակ այս հանգամանքը նկատէր ու զիտակցէր և վերջ տար իւր մէջ արիւնակցական ամուսնութեանը, որով կուժեղանար այդ խմբակի սերունդը, բոլոր խմբակներն էլ նրան էին հետևում, ոյժով յետ չմնալու համար:

«Ահա այդ հանգամանքը պատճառ եղաւ ամուսնութեան կանոնաւորելուն: Թէ ինչպէս ծագեց իսկապէս նախնական արիւնակից խմբակը, որը նախնական ընտանիքը պիտի համարենք, չգիտենք: Այդ տեսակետից մենք պէտք է եզրակացնենք միայն: Բոլոր ժողովուրդներն էլ անշուշտ պիտակցել են արիւնակցութիւնը, լինի աւելի վաղ թէ աւելի ուշ, եթէ ուսումնասիրենք այժմւայ վայրերի ցեղերի կեանքը, մենք կտեսնենք նախնական մարդկանց անցեալ կեանքը, որը անյայտութեան մէջ է թաղւած: Ամենանախնական արիւնակիցները կամ ազգակիցները բաժանում էին երկու զխաւոր ճիւղի, մեծեր և փոքրեր: Բոլոր մեծերը համարւում էին բոլոր փոքրերի ծնողները, այսինքն նրանց հայրերն ու մայրերը, իսկ բոլոր փոքրերը, ընդհակառակը համարւում էին բոլոր մեծերի զաւակները, այսինքն նրանց տղաներն ու աղջիկները: Համաձայն այդ բաժան-



ման անհաւասար ամուսնութիւն գոյութիւն չունէր, մի վնասակար երեւոյթի բացակայութիւն, որն հազարաւոր տարիներ յետոյ գոյութիւն ունի քաղաքակրթւած ազգերի մէջ անգամ: Այն ժամանակ ծերունին պիտի ամուսնանար պառաւի հետ, երիտասարդը մատաղ կնոջ հետ: Սովորաբար պատանին փոքրերի շարքն էր անցնում իւր ամուսնանալուց յետոյ և մանաւանդ երբ երեխայ էր ունենում: Այդ նոյն փոքրը մեծերի շարքն էր անցնում այն ժամանակ, երբ իւր որդին ամուսնանում էր կամ մանաւանդ երբ երեխայ էր ունենում: Այսինքն երբ մէկը որդի ունէր մտնում էր փոքրերի շարքը, իսկ երբ թող ունէր մտնում էր մեծերի շարքը: Ահա այս հանգամանքն էր, որ չէր արգելում քոյր և եղբոր ամուսնութիւնը: Քոյր և եղբայր համարում էին ոչ միայն միեւնոյն մօրից ծնւածները, այլ և որեւէ ճիւղի բոլոր հասակակիցներն ու նոյն ճիւղի պատկանածները: Թէ ինչպէս ժամանակի ընթացքում բրոջ և եղբոր ամուսնութիւնը վերացաւ, դորա մասին առանձին տեղեկութիւններ չկան:

«Ամուսնութիւնը շատ հին ժամանակներում մեծ դեր է խաղացել մարդկանց կեանքի մէջ, նաև նրանց ընդհանուր յարաբերութեան տեսակէտից: Հին ժամանակ մարդիկ, ինչպէս անցեալ անգամ էլ ասացի, ապրում էին խմբերով: Այդ խմբերը բաղկացած էին 30—40 անդամից և ապրում էին երկրի որոշ սահմանում: Այդ խմբերը կոչւում էին օրդաններ: Կանայք զլխաւորապէս պարապում էին տնտեսութեամբ, իսկ տղամարդիկ որսով: Ահա այդպիսի խմբերի մէջ ամուսնութիւնը դժարութեամբ էր տեղի ունենում, քանի որ երիտասարդները շատ անգամ իրենց դիմաց ոչ արիւնակից աղջիկ չէին գտնում, ուստի այդպիսի օրդանները իրենց

ամուրի անդամի համար հարսնացուն գտնելու նպատակով անդադար ընդհարումների մէջ էին հարեան օրդանների հետ: Աւելի ուշ ժամանակներում այդ օրդանները զազարում են ուժով կին ձեռք բերել և դորան փոխարինում է վաճառելու ձևը: Որեւէ օրդայից աղջիկ առնելու համար հարկաւոր էր վճարել կենդանիների մօրթ, թանկագին փայտ, մետաղ, կենդանիներ, երբեմն գործիքներ և զէնքեր, իսկ աւելի ուշ ժամանակներում նաև փող: Աղջիկ վաճառելու ձևը մեր հին հայերի մէջ էլ կար, այդ սովորութեան համեմատ մեր Արտաշէս թագաւորը Կովկասի լեռնականների թագաւորի աղջիկ Սաթենիկին կնութեան առնելու համար վճարել է կենդանիների մօրթ, փող և այլն: Այժմ էլ մեզնում այդպիսի սովորութիւն կայ: Մեր լեռնային երկրներում տղան պարտաւոր է նախ քան հարսանիքը աղջկայ հօրը վճարել մըսացու, խմիչք (գինի ու արաղ), չայ-շաքար և այլն, որը համարեա նոյն միտքն ունի:

«Կնոջ փոխանակելու այսպիսի առևտրական ձևը վերջ ի վերջոյ մի նոր սահման էլ է դնում արիւնակցական ամուսնութեան դէմ: Մի օրդայից կին առնելով ստիպւած էին հետևել և որոշել նաև այդ օրդայից վերցրած այդ կնոջ արիւնակիցներին, որպէսզի արիւնակցական ամուսնութիւն տեղի չունենայ: Նոր օրդայում որեւէ կնոջից ծնւած երեխաները համարւում են նախկին օրդայում նոյն կնոջից ծնւած երեխաների եղբայրներն ու քոյրերը, իսկ յաճախ այդ կնոջ եղբայրների քոյրերն ու եղբայրները: Եւ որովհետև այդպիսի խորթ քոյր ու եղբայրների մէջ էլ արգելւած էր ամուսնական կապը, ուստի և նրանք խիստ հետևում էին արիւնակցութեանը և հաշւում էին, կնոջ զծով էին հաշւում: Մօր տոհմական անունը դրւում էր նորա երեխա-



ների (հին թէ նոր օրդայում եղած) վրայ և այդպիսով միևնույն անունը կրողները իրաւունք չունէին միմեանց հետ ամուսնանալ:

Այդպիսի անուն կրում էին մի մօր զաւակները, նորա աղջկայ զաւակները, աղջիկ թոռան զաւակները և այլն: Արիւնակցական այդպիսի ճիւղը կոչւում էր մայրական ճիւղ հակառակ հայրական ճիւղի, որը հաշւում էր տղամարդու զծով, այսինքն նորա տղայի, թոռան և այլն:

Այժմ ձեզնից իւրաքանչիւրն անշուշտ կմտածի, թէ ինչպէս էին հաշւում միևնույն ճիւղի պատկանածներին զանազան օրդաներում: Հէնց զխաւորն էլ այն է, որ արիւնակից միևնույն ճիւղին պատկանածները չէին մնում հին օրդայում, այլ կնոջ հետ փոխադրւում էին միւս օրդան և այնտեղի ծնւածների հետ մեծացնում իրենց ճիւղը: Այսպիսով կանանց, ուրեմն և նրանց հետեւողների մի քանի անգամ այս օրդայից միւս օրդան անցնելով ամբողջ օրդանները միմեանց հետ կապւում էին արիւնակցական կապերով: Ահա այդպիսի աւելի մեծ արիւնակցական խմբերը, որոնք կազմւած էին մի քանի փոքր արիւնակցական ճիւղերից, կոչւում էին ֆրատըրեաներ:

Փարտրեա բառը, որ երբէք զուք լսած չէք լինի, ուրիշ ազգի (յունարէն) բառ է, որ կնշանակէ իսկապէս եղբայրութիւն:

«Այդ հին ժողովուրդների մէջ մեծ մասամբ մայրական ճիւղն էր իշխում, որովհետեւ մի շարք հանգամանքներ այդ բանն աւելի յարմար էին դարձնում: Հին ժամանակ ես արդէն ասացի, որ պարապում էին հողագործութեամբ: Մի արհեստ, որով բացառապէս կանայք էին պարապում. Տղամարդիկ իրենց որսորդական ար-

հետն ունէին, որի համար և թափառական կեանք էին վարում, իսկ հողագործութեամբ պարապող կանայք ստիպւած էին նստակեաց կեանք վարել: Այս վերջին հանգամանքը համախմբում էր կանանց մի տեղ, իսկ տղամարդիկ թափառական կեանք վարելով, երբեմն միայն նրանց մօտ էին գալիս, կարծէք որպէս ժամանակուր հիւրեր: Կանայք շնորհիւ իրենց արհեստի, որոշ ազգեցութիւն ունէին տղամարդկանց վրայ, բայց շուտով հանգամանքները փոխւեցան: Անասունների ընտանեցնելով տղամարդիկ որոշ նշանակութիւն ստացան արհեստի տեսակետից: Անասուններին մի տեղից միւսը քշելու համար տղամարդիկ մեծ ընդունակութիւն ունէին և պարապմունքը փոխելով տղամարդիկ գերիշխանութիւն ստացան, կանայք այժմ ստիպւած էին միանալ իրենց քուրը տղամարդկանց և վերջիններիս գերիշխանութիւնը պատճառ դարձաւ արիւնակցական ճիւղը տղամարդկանց զծով հաշւել: Այսպիսի կազմութիւնը կոչւում էր նահապետական (պատրիարխալ) ճիւղ, իսկ ամբողջ ճիւղի մեծը տղամարդկանց հասակաւորը՝ պատրիարխ կամ նահապետ:

«Այսպիսի անասնապահական կեանքի պայմաններում իհարկէ աճում էր ոչ թէ միայն օրդան, այլ և նրանց անասունների հօտերը, որով պակասում էր նաև արօտատեղը: Ահա այդ կարիքը բաւարարելու համար օրդանները բաժանւում էին փոքրիկ խմբերի և իւրաքանչիւրը իւր բաժին անասունների հետ հեռանում զանազան կողմեր: Բոլորը արդէն սրբազան պատմութիւնից գիտէք, թէ ինչպէս Աբրահամն ու Դովթը հէնց անասունների պատճառով բաժանւեցան միմեանցից և փոխադարձ համաձայնութեամբ մէկը դէպի աջ գնաց միւսը դէպի ձախ: Այս օրինակից կարծում եմ հասկանալի



կլինի, թէ իշպէս և ինչից զրդւած օրդաները բաժանուում էին խմբերի: Նման երեւոյթ տեղի է ունեցել նաև մեր հայերիս մէջ: Մեր աւանդական պատմութիւնից արդէն գիտենք, որ Հայկը հարաւից հիւսիս գալով իւր Կաղմոս որդուն թողնում է մի լեռնադաշտում, իսկ ինքը հիւսիս գնալով մի այլ լեռնադաշտ բռնում: Այդ ձևով էլ Հայկի սերունդը բաժանւելով տարածւել է սկզբում Մասիսի և Արագածի սահմաններում, ապա Զիրակում, Գեղարբունի Սիւնիք գաւառներում

«Այդ օրդաները բոլորն էլ կազմում էին հէնց ըսկզբից առանձին մեծ ընտանիքներ, որոնք միասին աշխատում և միասին էլ վայելում էին, նրանց անդամների մէջ իմ ու քո չկար: Նրանք բոլորն էլ հաւասար իրաւունք ունէին, միակ մինչև նահապետը արդէն ժամանակին գոյութիւն ստանալով օգտւում էր առանձին իրաւունքներով: Այդ օրդաներն ամբողջ ժամանակ նւիրւած էին միացեալ ոյժով տնտեսական նոր նոր բաւարարութիւններ գտնելու որի համար մի առանձին կարեւորութիւն էր ներկայացնում աշխատող ձեռքերի գոյութիւնը: Այս կարիքը ժամանակին մարդկանց շարքերում ստեղծեց մի առանձին դաս, որոնք ծանրաբեռնւած էին զանազան ծանր աշխատանքներով և հոգով ու մարմնով այդ օրդաների սեպհականութիւնն էին կազմում: Այդ դասը ստրուկների դասն է, որ հազարաւոր տարիներ յետոյ անգամ գոյութիւն ունէր նոյն իրաւունքներով և նոյն պարտականութիւններով:

«Ստրուկ դասը մարդկային յառաջադիմութեան, մանաւանդ տնտեսական յառաջադիմութեան մէջ, կարեւոր դեր է խաղացել մարդկութեան ամբողջ անցեալում և այդ տեսակետից կարեւոր է իմանալ, թէ ինչ պայմաններում և ինչ ձևով յառաջացաւ ստրուկ

դասը գեռես նախապատմական շրջանում:

«Մի քիչ առաջ ես ասացի, որ օրդաները միմեանց հետ անընդհատ կռիւներ ու ընդհարումներ էին մղում, միւսի արօտատեղը, գործիքները, կենդանիները խլելու և հարսնացու ձեռք բերելու նպատակով: Ասացի նաև, որ այդպիսի ընդհարումները շատ անգամ այն հետեանքն էին ունենում, որ մի օրդայ միւսից գերի էր վերցնում մարդկանց: Սուրա ամբողջապէս կենթարկւում էին յաղթող օրդային, որը կամ աշխատեցնում էր իւր հողերի վրայ, կամ թէ չէ կերակրւում էր նրանց մսով: Բայց երբ ընտանեցրած կենդանիներն աւելի ևս բազմացան, երբ հողագործութիւնն ու որսորդութիւնն իրենց առատ արդիւնքները տւին, օրդայի իսկական անդամները լաւ համարեցին ստրուկներին կամ հակառակ օրդայից գերի վերցրածներին չմօրթել կերակրելու համար, այլ ծառայեցնել, ինչպէս բանւոր անասուն իրենց աշխատանքների ժամանակ:

«Ահա այդ գերիները կամ ստրուկները ապրում էին յաղթող օրդայի սահմաններում, աշխատում էին նրանց համար, զուրկ էին բոլոր իրաւունքներից և շատ շատ իրենց ստամոքսի և մի բանի այլ պահանջների բաւարարութիւն էին ստանում: Նրանք իրաւունք չունէին ամուսնական կապ ունենալ օրդայի իսկական անդամների հետ, իսկ ունեցած զէպրում էլ նրանց երեխաները համարւում էին ոչ իսկական անդամներ, այլ դարձեալ ստրուկներ, և օգտւում էին իրենց ստրուկ ծնողի իրաւունքներով ու պարտականութիւններով միայն: Ստրուկներին նոյնիսկ մարդ չէին համարում և այդ հանգամանքների շնորհիւ ստրկութիւնը տարածւում էր, միևնույն ժամանակ սովորական երեւոյթ դարձնելով նաև անընդհատ ընդհարումներն ու կռիւները:



«Օրդանների տնտեսական զրուծիւնը շնորհիւ ըստրուկների առաջ գնալով, մեծացաւ նաև օրդանների հարստութիւնը, որը հրապարակ նետեց մի այլ կարեւոր խնդիր: Ամբողջ օրդան կամ օրդայի մէջ եղած որեւէ սերունդ տէր լինելով մի որոշ հարստութեան, հարկաւոր էր որեւէ սովորութիւն, թէ ումն էր պատկանում այդ հարստութիւնը, երբ օրդայի կամ սերունդի մեծը մահանում էր, երբ իսկական սերունդի մէջ արուներկայացուցիչ չկար, իսկ ստրուկներն էլ իրաւունք չունէին փոխարինել իսկական տէրին, ահա այդ ժամանակ ամբողջ հարստութիւնն անցնում էր սերունդէ սերունդ որպէս ժառանգութիւն: Այս հանգամանքը բիշ չէր նպաստում օրդանների կամ սերունդների միացեալ, եթէ կարելի է ասել, համայնական կեանք վարելուն:

«Ասացի, որ ստրկութեան պատճառով ընդհարումները աւելի տեսական էին դառնում: Օրդանները հարսնացու գտնելու համար աւելի հեռուն էին գնում, քանի որ նոյն օրդայում ստրուկի հետ ամուսնանալուց ժառանգները զրկւում էին իսկական իրաւունքներից: Ահա այդ պատճառով կիներ դառնում է մի թանգագին հարստութիւն, որը ձեռք բերելու համար օրդաններն ամեն միջոց գործ էին դնում միմեանց դէմ, նրանք բացի միմեանց հետ ունեցած պատեհադմաններից կին փախցնելու սովորութիւնն էլ մտցրին գործադրութեան մէջ, որը մինչև օրս էլ գոյութիւն ունի և շատ ժողովուրդների մէջ բաշութիւն է համարւում: Հնումը հայերիս մէջ էլ կին փախցնելու սովորութիւնը եղել է և ժողովուրդը հարիւրաւոր տարիներ յետոյ դեռ ևս պահում և շատ անգամ գործադրում է այդ վայրենի սովորու-

թիւնը: Արտաշէս թագաւորի մասին հին ժողովրդական երգերը պատմում են, որ Մաթենիկին ոչ ժով է փախցնել, պարանք\*) ձգելով նրա մէջքը: Կանանց փախցնելու փոխադարձ սովորութիւնը ժամանակի ընթացքում փոխադարձ համաձայնութեամբ տեղի է տալիս մի այլ սովորութեան, գնելու սովորութեանը, որի մասին արդէն պատմել եմ ձեզ:

«Օրդանները մեծանալով, մեծանում էին նաև այդ օրդանների մէջ մտնող զանազան տոհմերը կամ սերունդները, որոնք ժամանակի ընթացքում կտրտւելով բաժանւում են մանր մասերի, որոնցից իւրաքանչիւրը տասնեակ անդամներ ունէր և դառնում էր մեծ ընտանիք: Այդպիսի ընտանիքներ այժմ էլ գոյութիւն ունեն հէնց հայերիս մէջ, որոնցից իւրաքանչիւրն երբեմն ունենում է 40—70 անդամ: Օրդանների այդպիսի մեծ ընտանիքների բաժանւելով, բաժանւում է նաև շրջայի սեպհականութիւնը:

«Այն ժամանակ, երբ կին առնելը հեշտութիւն էր ներկայացնում, մարդիկ միեւնոյն ժամանակ մի քանի կին ունէին, բայց հէնց որ կինը ձեռք բերելու համար փախցնելու կամ գնելու սովորութիւնը հրապարակ եկաւ, մարդիկ անկարող լինելով մի քանի կին փախցնել կամ գնել, սակաւ առ սակաւ կորցրին բազմակիւնութեան սովորութիւնը: Զատ կին կարող էր ունենալ միայն ընտանիքի և մանաւանդ օրդայի մեծը կամ նահապետը, որը թէ ոյժ ունէր և թէ հարստութիւն: Եթէ չէր մոռացել, ես արդէն ասացի, որ օրդայի մեծին էր պատկանում ամբողջ հարստութիւնը: Բայց իսկապէս

\*) Այդ պարանք, որի ծայրին օղ կար և այդ օղի միջով անցնում էր պարանի միւս ծայրը, գործ էր ածւում կռիւների ժամանակ փախչողին բռնելու և նման էր ներկայումս կատաղի ձիերին «խեղդելու» պարանին: Խեղդելու, որով ձիւ կատաղութիւնը մեղմանում էր:



նահապետն էլ միայն մի կին ունէր, որի պարտականութիւնն էր օրինական զաւակներ ծնել և սնուցանել, Միւս կանանցից ծնւած երեխաները կիսօրինական էին համարուում: Մեր հայերիս մէջ հնումը անյայտ է, թէ բազմակնութիւն ընդհանուր ձեով գոյութիւն ունեցել է թէ ոչ: Բայց ընդհանուր հայեացքով կարելի է այն պատասխանել, բանի որ մեր թագաւորներից Լըշակ երկրորդը քրիստոնէական շրջանում անգամ բազմակին էր, այն զանազանութեամբ միայն, որ այդ կանանցից մէկը կոչւում էր Տիկնանց տիկին, որը նոյնն էր, ինչ վերը ասացի և որի զաւակներից միայն կարող էին հօր մահից յետոյ գահ բարձրանալ:

«Մի քանի անգամ յիշեցրի ձեզ, որ մարդիկ խմբերով էին ապրում և նրանց մէջ իմ ու քո չկար, բոլորը միասին աշխատում էին և միասին վայելում: Եւ ժամանակ ամբողջ աշխատանքը համայնական էր, այսինքն ընդհանուրով: Համայնական զաւաժարը ինչպէս քանիցըս անգամ ձեզ ասել և կարգացել եմ, այժմ էլ տեղ տեղ գոյութիւն ունի և ներկայումս բոլոր ազգերի մէջ կան զանազան խմբեր, որոնք ցանկանում են ժամանակի ընթացքում աշխատանքը դարձնել համայնական: Պա մի միջոց է, որով նրանք հաւատացած են, որ վերջ կլինի մեր անիծեալ աշխարհի ամենամեծ անարդարութեանը, այսինքն այլևս մէկը չի չարչարի, չի աշխատի, միւսն էլ չի վայելի: Բոլորն էլ պէտք է չարչարեն, քրտնեն և բոլորն էլ վայելեն:

«Ի՞նչպէս էր կատարւում հնումը համայնական աշխատանքը: Պա շատ հետաքրքիր է և աչքի էր ընկնում մանաւանդ այնպիսի գործերում, որոնք մեծ ոյժ և մեծ աշխատանք էին պահանջում. ինչպէս օրինակ կենդանիների որսը, ձկների որսը և այլն: Կենդանիների որսի

այն միջոցները, որոնք գործադրւում էին մեծ աշխատանք և մեծ ջանք էին պահանջում: Այդ որսը մի քանի ձևերով էր կատարւում: Մենք արդէն տեսանք, թէ մարդիկ ինչպիսի գէնքեր ունէին իրենց որսի և ինքնապաշտպանութեան համար: Մարդիկ ահագին խմբերով շրջապատում էին կենդանուն և նիզակներով զինւած յարձակւում նրա վրայ: Այդպիսի ժամանակ խմբերն ունենում էին մի ընտրւած կառավարիչ, որը աչքի էր ընկնում իւր փորձառութեամբ և հմտութեամբ: Բոլորը պարտաւոր էին ենթարկւել այդ կառավարչի ցուցմունքներին ու հրամաններին: Կենդանին իւր բնից հանելու և ղէպի որսորդները հալածելու համար նշանակւում էին կանայք և երեխաները, իսկ տղամարդիկ զինւած դարան էին մտնում և սպասում կենդանուն: Կային կենդանիներ ևս, որոնք ուժեղ էին և վտանգաւոր, այդպիսի կենդանիներին հալածելու համար կար երկու զխաւոր միջոց: Առաջինը, որ հալածող կանայք և երեխաները զանազան կողմերից կրակ էին վառում կենդանու բնի շուրջը, քամու օգնութեամբ կենդանին շրջապատւում էր ամեն կողմից հրդեհով և շփոթւում: Այդպիսի դրութեամբ նա ջանք էր անում ոչ թէ վրէժխնդիր լինել իրեն անհանգստացնողներից, այլ մի կերպ գլուխն ազատել: Ահա այդ ժամանակ առաջ էին գալիս զինւած տղամարդիկ և հարւածում յուսահատ ու զլուխը կորցրած կենդանուն իրենց նիզակներով:

«Գազաններ կամ աւելի մեծ կենդանիներ որսալու ամենագործածական միջոցն էր նաև հետեւեալ միջոցը, որը մեծ աշխատանք էր պահանջում: Կենդանու բուն դրած տարածութեան սահմաններում մարդիկ մեծ, խոր խրամատներ (մեծ փոսեր, առունների ձեով) էին փորում որոնց միւս եզրին բարձր ցանկապատներ էին կանգնե-



ցնում հաստ ձողերից: Ապա կրակի կամ ընդհանուր աղաղակների միջոցով կենդանուն հանելով իւր բնից շրփոթեցնում և հալածում էին նրան դէպի խրամատները, որի շուրջը դարան մտած սպասում էին զինւած տղամարդիկ: Կենդանին գլուխը կորցրած վազում և ընկնում էր խրամատի մէջ, որից անկարող էր դուրս ելնել, մանաւանդ, որ խրամատի եզրը փակւած էր ցանկապատով, իսկ միւս եզրին բռնել էին որսորդները իրենց դէնքերով: Զատ յաճախ միաժամանակ այդպիսի խորխորատների մէջ էին ընկնում մի քանի կենդանիներ, որոնք միմեանց հետ կուի բռնւելով պակաս չէին հեշտացնում որսորդների գործը: Ահա որսի այդ ձևերը, ինչպէս տեսնում էք, մեծ աշխատանք էր պահանջում, մանաւանդ նետ ու աղեղի գիւտից առաջ, երբ որսը նիզակով էր լինում և որսկանին ամենամեծ վտանգն էր սպառնում՝ ընկճւել մօտիկ գազանից: Այս փոքրիկ նկարագրելուց յետոյ, եթէ ասեմ, որ որսալուց յետոյ որսը հաւասար բաժանւում էր բոլորի մէջ առանց ինքկատի ունենալու թէ ով է եղել խփողը, կամ ով որքան աշխատանք է թափել, այն ժամանակ դուր բոլորդ էլ կզարմանաք գուցէ այդ համարեա վայրենի մարդկանց սովորութեան վրայ: Բայց չպէտք է միշտ մոռանանք, որ այժմ էլ, երբ մենք բոլորս դէպի մեր օգուտն ենք քաշում և շատ անգամ ուրախութեամբ վնասում ենք մեր ընկերներին, մեզ նման մարդուն, ինչ է թէ մի փոքր օգուտ կունենանք: Ահա հէնց այդ մեծ անարդարութեան մասին է, որ վերջին տարիներս մենք լսում և կարգում ենք, բայց դժբաղդաբար շատ քիչ նշանակութիւն է ունենում և շատ քիչ բան ենք սովորում այդ լսածից ու կարգացածից: Այդ հին ժամանակայ մարդիկ, որոնց պատմութիւնը լսելուց գուցէ ծիծա-

ղում էլ ենք, չգիտէին այդպիսի անարդարութիւն և յանուն արդարութեան որսը կառավարող ընտրւածն անգամ, որից անպայման մեծ աշխատանք էր պահանջում, հաւասար բաժին պիտի ստանար միւսների նման: Որսը բաժանւում էր նայելով, թէ ով քանի շունչ ունի, քանի նափար, ինչպէս ժողովուրդն է ասում: Եւ շատ անգամ եթէ պատահում էր, որ մի որեւէ ընտանիք շուտ էր վերջացնում իւր ստացած բաժինը, այն ժամանակ, ում բաժինը, որ աւելանում էր, այդ աւելացածից պարտաւոր էին չունեցողին բաժին հանել:

«Այդպիսի ընդհանուր ոյժով որսորդութիւն այժմ էլ կայ, միայն այն զանազանութեամբ, որ այստեղ միայն տղամարդիկ են գործ տեսնում: Այսպէս օրինակ Ղարաբաղում վայրենի խողի (վարագ) որսը, որ գլխաւորապէս ձմեռն է լինում, կատարւում է տասնեակ մարդկանց մասնակցութեամբ, որոնց մէջ նախօրօք որոշւած է, թէ ովքեր պիտի հալածեն, ովքեր պիտի հրացանով խփեն և թէ ովքեր պիտի զնդակը չազդելու դէպքում սրերով յարձակում գործեն: Ինչպէս գիտէք խողի կաշին շատ թաւոտ է, մազը կոշտ, իսկ միսն էլ հաստ ճարպով պատած, շատ անգամ գնդակը չի ազդում և կենդանին մնում է անմնաս: Ահա այդպիսի ժամանակ դարան մտած տեղերից սրերով գազանի յետեւից յարձակում են գործում որոշ մարդիկ և հարւածներով ուժաթափ անում գազանին:

«Ինչպէս էր կատարւում ձկնորսութիւնը: Ինչպէս անցեալ անգամ էլ համառօտ ասացի, ձուկ որսալու համար կամ զետի ընթացքն էին փոխում, կամ նիզակներով խփում էին մեծ ձկների, ինչպէս դէտը, փոկ կոշւած կենդանին և այլն: Մի բան, որ ինչպէս տեսնում ենք, յաջողութիւն չէր կարող ունենալ մի մարդով: Բա-



ցի այդ միջոցներից, դուք արդէն գիտէք, որ տարւայ որոշ ժամանակը ձկները մեծամեծ խմբերով գետի ընթացքով ցած ու վեր են անում: Մագիկ այդ բանը լաւ էին հասկացել և այդ պատճառով նրանք գետի ընթացքը փակում էին ցօնկապատով, որը մի աւելի մեծ անցք ունէր: Այս անցքի առաջ դնում էին մեծ զամբիւղ: Յանկապատի առաջ ջուրը այդ անցքով ցած թափւելով իւր հետ բերում էր և թափառող ձկներ, որոնք թափւում էին զամբիւղի մէջ և այնտեղից կրկին դուրս գալու հրնար չգտնելով, զիւրութիւն տալիս մարդկանց որսալու: Ահա մի միջոց ևս, որը դարձեալ բնականուր ոյժով կարող էր զլուխ գալ:

«Այսքանը որսորդութեան և ձկնորսութեան մասին: Բայց չէ որ նրանք հէնց սկզբից մի առանձին հետաքրքրութիւն էին ցոյց տալիս դէպի հողագործութիւնը, որը նոյնպէս բնականուր աշխատանքի կարօտ էր: Հողագործութեան մէջ ուռուցումը (ջրել) և հերկելը մեծ տեղ էին բռնում: Կային բոյսեր, որոնք առատ ջուր էին պահանջում, ինչպէս բրինձը և այլն: Ահա այդ կարիքին բաւարարելու համար մարդիկ անձրեկից բոյացած լճակներից ջուրը առունների միջոցով իրենց ցանկացած տեղերն էին տանում, կամ գետերից էին վերցնում: Երկու դէպքում էլ նախնական գործիքներով աշխատող մարդը մեծ գժւարութիւն էր պոլում և երկար ժամանակ պիտի ունենար, եթէ համայնական, բնականուր աշխատանքի գաղափարը նորանց մէջ չլինէր: Այդպիսի ժամանակ, մանաւանդ ոռոգման համար, նրանք իրենց միջից ընտրում էին մէկին, երկուսին, որոնք ազատւում էին միւս աշխատանքներից և պարտաւոր էին հսկել, որպէսզի ջուրը բոլոր ցանքսերին էլ հաւասարապէս հասնէր: Ուրիշ խօսքով նրանց պաշտօնը ջրբաժնութիւնը

կամ միջառութիւնն էր որ կատարում էին և որպէս համայնքի, ընտանիքի անդամ իրենց հաւասար բաժինն ստանում:

«Ինչպէս անցեալ անգամ սոսացի, կրակի գիւտը պատճառ դարձաւ մարդկանց շինութիւններ շինել, որոնց մէջ պատասպարում էին կրակը, իրենց կենդանիների և իրենց: Այդպիսի շինութիւնները աչքի էին ընկնում իրենց մեծութեամբ, որոնց շինելու համար շնորհիւ նախնական գործիքների անյարմարութեան, մեծ գժւարութիւններ կային: Օրդայի որեւէ մասը կանաչք տղամարդիկ խառն ջոկւում իրենց համար տուն էին շինում, որը դառնում էր շինողների սեպհականութիւնը, և ուրիշ ոչ ոք իրաւունք չունէր ձեռք տալ այդ սեպհականութեանը: Զատ անգամ կանաչք առանձին և տղամարդիկ առանձին տներ էին շինում և դորանցից ոչ ոք իրաւունք չունէր միւսի տունը մտնել:

## 9.

«Մինչև այժմ մենք տեսանք, թէ ինչպիսի պայմաններում էին մարդիկ ապրում և բազմանում: Մի քանի անգամ ես շեշտեցի, որ նրանք նոր արօտատեղիներ փնտրելու զիտաւորութեամբ խմբերով թափառում էին այս ու այն կողմը և իրենց համար բնակութիւններ հաստատում զանազան տարածութեան սահմաններում: Մենք տեսանք նաև, որ տարբեր արիւնակցութիւններ կային: Կային նաև օրդա կոչւած մեծ խմբեր, որոնք իրենց սեպհականութեամբ, իրենց բնակութեան սահմաններով տարբերւում էին սիմեանցից: Խօսում էին արդեօք և ինչ լեզուով: Ահա մի կարեւոր հարց, որի մասին մինչև այժմ ես ոչինչ չսոսացի: Լեզուի մասին խօսելուց, մենք նախ և առաջ պէտք է իմանանք, որ բո-



լոր կենդանիներն էլ ունեն մի միջոց, որով իրենց ներքին զգացումն են յայտնում կամ ցանկութիւն են պարզում: Այսպէս, օրինակ, կենդանիներից ոմանք բառաչում են, մկկում, խրխնջում են և այլ: Մարդը, որին մի բոպէ եթէ այդ կենդանիների շարքում դնելու լինենք, անշուշտ պէտք է նման յատկութիւն ունենայ խօսելու կամ իւր ներքինը յայտնելու համար: Ո՞րն էր այդ յատկութիւնը կամ արտայայտելու միջոցը: Մարդկանց մէջ բոլորովին բնական ձևով կային և այժմ էլ կան որոշ հնչիւններ, որոնցով նա յայտնում է իւր ցաւը, ուրախութիւնը, որոնցով նա օգնութեան է կանչում, այսպէս օրինակ, ախ, հէյ, և այլն: Մարդիկ հեշտութեամբ նկատում էին, թէ ինչ հնչիւն էր արձակում իրենց ընկերը, որին վտանգ էր սպառնում ծովի վրայ, որսի ժամանակ և այլն: Բաւական էր մէկը մի որեւէ հնչիւն արձակէր և ընկերը հասկանար, արդէն գործածութեան մէջ էին մտցնում և բոլորն էլ այդ ձևով նրման դէպքերում իրենց ցանկութիւնն յայտնում: Օրինակի համար, վերցնենք մեր երեխաներին, որոնք մանուկ հասակում խօսել չգիտեն. նրանք զանազան հնչիւններով հասկացնում են որ ջուր են ուզում, հաց, կաթ են ուզում, կամ իրենց հօրն կամ մօրն են կանչում և այլն: Այդ հնչիւնները մեզնից շատերը սովորում են հասկանում, և երբ երեխան կրկին արձակում է, մենք սկզբում հարցնում ենք նրան. «Ինչ, հաց ես ուզում, մայրիկը, ձին, խաղալիքը» և այլն և այլն: Եւ բոլորովին իւրացնելով նրա ասածը իսկոյն և եթ ըմբռնում ենք:

«Մարդիկ հնումը այդպիսի հնչիւններ իւրացնելով ժամանակի ընթացքում սովորում են և խօսել, որի մէջ մեծ նշանակութիւն ունի նաև նրանց մարմնի այն

գործարանների կազմութիւնը, որոնց օգնութեամբ նրանք խօսում են: Ձեզ արդէն յայտնի է, որ մարդկանց բերանը, կոկորդը, քիթը այնպիսի կազմութիւն չունի, ինչ որ կենդանիներին: Այժմ էլ կան բառեր, որոնց հնչելուց մենք կարող ենք զանազան միտք յայտնել: Այսպէս, օրինակ, երբ մեզ հարցնում են. «այսինչ բանը որտեղ է», եթէ այդ հարցրածը մօտ է, այն ժամանակ մենք պատասխանում ենք «այ», իսկ եթէ հեռու է լինում, այդ հեռաւորութեան չափ էլ մենք հնչում ենք «աայ», որը լսողը հասկանում է մեզ: Զատ անգամ այդ հնչիւնները բնութեան արձագանքի հետ խառնելով նոր հնչիւն են տալիս և նոր նշանակութիւն են ստանում:

«Ձանազան տեղերում բնակւած խմբերը զանազան ձևերով ըմբռնում են այդ հնչիւնները և իւրացնում, որով նախկին լեզուն, զանազան մասերի է բաժանւում և նոր նոր լեզուներ են կազմւում, որի մասին այս երեկոյ խօսելը դժւար և անյարմար կլինէր ձեզ համար: Միայն հետաքրքիր էր յայտնել թէ ինչպէս առաջ եկան լեզուները և գրութիւնը: Մի ժամանակ մարդկանց համար միայն երեք թիւ կամ երեք համարք կար: Մէկ, երկու և շատ: Թէ ինչու նրանք երեքից սկսած բոլոր համարներին շատ են անւանում, այդ կարելի է բացատրել նրանով, որ մարդիկ նման էին մեր այժմայ երեխաներին, որոնք երեքից յետոյ շատ դժւարութեամբ են սովորում: Մարդիկ ժամանակի ընթացքում սկսում են մատնելով համբել, քանի որ յիշողութեան կողմից շատ թոյլ էին: Չորս համբելու համար նրանք համրում էին չորս մատը, իսկ հինգ համբելու համար պարզում էին ձեռքը: Վեցից մինչև տասը հասկացնելու համար նրանք պարզում էին մի ձեռքը և միւս ձեռքից այնքան մատ,



որքան պակաս էր մնում. Տասը արտայայտելու համար մեկնում էին երկու ձեռքը միասին. Նրբ ցոյց են տալիս ոտի մի մատը, դա կնշանակէր տասնեմէկ, երկուսը՝ տասներկու և այլն. Ամբողջ ոտը կնշանակէր տասներկու, իսկ երկու ոտերը քսան: Քսանից աւելի մարդիկ համբել չգիտէին, մանաւանդ, որ առօրեայ կեանքում ոչ մի կարիք չէին զգում:

«Գրի տեսակէտից մարդիկ անտառներում, ծառերի, ժայռերի վրայ փորագրում էին զանազան գրեր, որոնք որեւէ նշանակութիւն ունէին: Նրանք ձի գրելու տեղ նկարում էին ձի և այդպէս նկարներով ու փորագրութիւններով յայտնում իրենց միտքը: Փորագրութեան հաստատակ ձևը կայ նաև ներկայումս: Հատ անգամ անգրագէտ բանւորները իրենց աշխատանքը չափելու համար, օրինակ բեռով կամ շալակով որեւէ բան փոխադրելուց բանի անգամ փոխադրելը յիշելու համար որեւէ փայտի վրայ այնքան անգամ նշան են անում: Իսկ աւելի ուշ ժամանակներում սկսում են հնչիւնները պատկերացնել կամ տառեր գրել:

«Մարդիկ իրենց տնտեսական գործունէութեան ժամանակաշրջանում անպատճառ պիտի ունենային նաև մի հոգեւոր կեանք, որը կապւած էր մարդկանց ոչ թէ ստամոքսի հետ, այլ մտքի ու զգացումների հետ: Ամենօրեայ շրջագայութեան ժամանակ մարդիկ նկատում էին մի շարք երևոյթներ, որոնց մասին նորանց միտքն անկարող էր կատարեալ պարզաբանութիւն անելու: Այսպէս, օրինակ, նրանք չէին կարողանում բութոնել թէ ինչն է պատճառը, որ որոշ ժամանակ ցերեկ էր լինում, որոշ ժամանակ գիշեր և այդ երկուսը յաջորդում էին միմեանց ու կարգադրութեամբ: Միաժամանակ նրանք տեսնում էին իրենց գլխի վերը մի ընդարձակ տարա-

ծութիւն, որի վրայ գիշեր ցերեկ փայլում և լուսաւորւում էին զանազան մարմիններ: Գորանցից մի մասը ցերեկը չէին երևում, իսկ միւսն էլ գիշերը չէր երևում: Յաճախ նրանք քնի մէջ տեսնում էին այնպիսի անձնաւորութիւններ և այնպիսի առարկաներ, որոնք նորաքնած տեղից շատ հեռու էին գտնւում: Ո՞վ էր այդ առարկաները մտնեցնում, ահա մի գաղտնիք, որը նախնական մարդիկ հասկանալ չէին կարողանում: Նրանք զարմանում էին երբ յաճախ կրակը հեշտութեամբ վառւում էր, երբևէ էլ ոչ մի կերպ չէր լինում վառել: Այս բոլոր երևոյթների մէջ նա երևակայում էր մի շարք գաղտնի ու աներևոյթ ոգիներ, որոնք նստած դանազան առարկաների մէջ նրանց փոփոխութեան էին ենթարկում: Երեզակի մէջ նստած ոգին ուզած ժամանակ կը լուսաւորում, տաքացնում էր, ուզած ժամանակ անյայտանում մարդկանց աչքից: Կրակի մէջ նստած ոգին երբեմն ցանկացած դէպքում վառւում էր, ցանկացած դէպքում արգելում: Կայծակն, օրինակ, խիստ վախեցնում էր մարդկանց: Մարդիկ միշտ նկատում էին, որ այս կամ այն ծառը յանկարծ ինքն իրեն սկսում է վառել: Այդտեղ կնշանակէ ծառի մէջ նստած էր մի ոգի, որը ցանկացած դէպքում վառւում էր ծառը: Ահա այդպիսի գաղտնի ոգիներից մարդիկ շատ էին վախւնում, ուստի և նրանց շատ բարձր էին դասում և պաշտում էին նրանց: Նրանք կարծում էին, որ այդ ոգիներն էլ առանձին ցանկութիւններ ունեն: Ի՞նչ պիտի լինէին այդ ցանկութիւնները, այդ անյայտ էին նախնական մարդկանց: Սորա միայն հաւատացած էին, որ այդ ցանկութիւններից մէկը ստամոքսի պահանջն էր, որին բաւարարելու էին ձգտում այդ գաղտնի ոգիները, և մարդկանց պարտականութիւնն էր այդ պահանջը, կատարել:



Նրանք երբեմն կրակի չվառելը բացատրում էին նրանով, որ նորա ցանկութիւնները չեն կատարում, այդ պատճառով ոգին զայրացել և նրանցից վրէժխնդիր էլինում:

«Ոգիների այդ պահանջը բաւարարելու համար մարդիկ իրենց կերակուրներից որոշ բաժին էին դնում ծառերի, քարերի վրայ և մի քանի ժամանակից յետոյ նրանք տեսնում էին, որ այդ կերակուրն այլևս չկայ: Կնշանակէ ոգին վերցրել և կերել է: Մարդիկ նկատում էին, որ փայտը, բարը այդ ձևով կերակուրն ընդունում էին, ուրեմն և հաշտւում իրենց հետ: Բայց բոլոր առարկաները նոյն կերակուրը չէին սիրում: Այդ տեսակէտից մարդիկ տարբերութիւններ են սկսում դնել: Նրանք շատ լաւ էին նկատում, որ ճարպոտ կամ իւղոտ փայտը աւելի հեշտ էր վառւում, դա կնշանակէ փայտի այրող ոգին իւղ աւելի շատ էր սիրում: Մարդիկ այդ բազմաթիւ ոգիներից վախենալով և նրանց պաշտելով, միաժամանակ նրանց ցանկացած նւիրաբերութիւններ էին անում, որոնք մատաղի, զոհի նշանակութիւնն ունէին և որպիսին այժմ էլ գոյութիւն ունեն: Մատաղի կամ զոհի համար գործ էին ածում զանազան բերքեր, պտուղներ, կենդանիներ և այլն:

«Մարդիկ շատ լաւ էին նկատում, որ երբեմն իրենց զանազան պատահարների և երևոյթների մասին պատմածները կամ ուրախութիւն կամ երկիւղ էին պատճառում լսողներին: Կնշանակէ իրենց այդ նկարագրութիւնների մէջ կային ոգիներ, որոնք ցանկացած դէպքում ուրախութիւն էին ազդում և ցանկացած դէպքում երկիւղ: Այդ ներքին զաղտնիքը այդ ձևով ըմբռնելով, մարդիկ ժամանակին ցանկացան օգտուել դորանից ստիպելով մարդկանց կամ հէնց այդ ոգի-աստուածներին անել այն, ինչ իրենք կցանկային: Այդ պատճառով նրանք

դառնում էին դէպի այդ ոգիներին և խօսքով նրանց ստիպում իրենց օգնելու: Այդ դիմումները թովելու (հմայելու) և աղօթելու ձևով էր կատարւում: Հմայելու դիմումը հրամայաբար էր արտայայտւում, իսկ աղօթելով դիմելը խնդրոգաբար:

«Այդ դիմումները բոլոր մարդիկ չէին կարող, որովհետեւ հարկաւոր էր հմտութիւն, կամ աւելի լաւ ասենք, խորամանկութիւն, ճարպկութիւն: Ահա այդ պատճառով ստեղծւում են որոշ մարդիկ, որոնք միայն կարող էին այդպիսի միջնորդ լինել և որոնց պէտք է դիմել կարեւոր դէպքում: Ինչպէս մի անգամ էլ ասացի, կրակ պահպանողները համարւում էին ոգիների կամ աստուածների ծառաները և որոնք զբաղւում էին այդ ոգիներին հրամայելով կամ խնդրելով: Այդպիսիներն էին գուշակողները, կախարդները և այլն:

«Նախնական մարդիկ մի երևոյթ ևս չէին ըմբռնում: Դա իրենց նմանների մահն էր, մանաւանդ յանկարծակի մահը, որը բացատրւում էր նրանով, որ ոգին զայրացել է և դուրս եկել նորա միջից և ոգու վրէժխնդրութիւնից ազատւելու համար մարդիկ պարտաւոր էին որոշ պատիւներ տալ մեռածի դիակին: Այդ պատիւներից ամենաառաջինը գերեզմանն էր կամ դիակի ապրելու տեղը, որ շինւում էր սովորական տան նման: Ապա դիակին պէտք է կերակրել, որի համար նորա բնակարանում զանազան ուտելիքներ են դնում: Դիակի վրայ խնամք տանելու համար այդ բնակարանում ապրում էին նաեւ մի շարք ստրուկներ, իսկ երբեմն էլ մեռածի կինը պարտաւոր էր միշտ ապրել դիակի կողքին և խնամել այն: Սրանց հետ աւելորդ է ասել, որ գերեզման էին տանում զանազան ամաններ և կահ կարասիներ: Այսպիսի պաշտամունքից յետոյ, մար-



դիկ այնուամենայնիւ վախենում էին, որ ոգին վրէժ-  
խընդիր կլինի իրենցից և այդ պատճառով մեռածին տնից  
դուրս տանելուց ոչ թէ սովորական դռնով են դուրս  
տանում, այլ տան ետևի պատի մէջ քանդած անցքով,  
որը յետոյ պատում էին, որով իբր թէ մեռածը այլևս  
չի կարող տան մուտքը գտնել: Բացի դորանից մեռածի  
դիակը տեղաւորում էին տնից շատ հեռու սարի ետևը,  
կամ գետի միւս կողմը, որով այլևս չի կարող վերա-  
դառնալ: Բայց դորանով ամեն բան չի վերջանում:  
Մեռածի ազգականները պարտաւոր էին որոշ ժամա-  
նակներում այցելութեան գնալ դիակին և կերակուրներ  
տանել: Նրանք այդպիսով նկատեցին, որ մի քանի ժա-  
մանակից յետոյ դիակը փթում և անսովոր հօտ էր ար-  
ձակում, այդ պատճառով դիակը զմուսում էին և ազա-  
տում փթելուց:

«Զուտով մարդիկ այդ ոգի-աստուածներին պատկե-  
րացրին զանազան կենդանիների և մարդկանց կերպա-  
րանքով, և որովհետեւ բնութեան մէջ այդպիսին չէր  
պատահում, ուստի փայտից, քարից, ոսկուց և այլ մե-  
տաղներից պատրաստում էին զանազան կերպարանք-  
ներով մարդիկ, կենդանիներ, որոնց տեղաւորում էին  
իրենց տներում, ապաւինում էին դոցա մէջ նստած ո-  
գիների հովանաւորութեանը և պաշտում նրանց: Դորա  
կոչում էին կուռքեր: Այդ կուռքերի մէջ մեծ ու փոքր  
կար: Դորանց մէջ գոյութիւն ունէր նաև սեռը: Այսինքն  
այդ ժամանակաւ մարդկանց հայեացքով աստուածները  
ևս ամուսնանում էին, երեխաներ էին ունենում: Այդ-  
պիսի աստուածներ ունեցել ենք հնումը մենք հայերս ևս,  
որոնք զանազան անուններ ունէին: Այսպէս, օրինակ. Ա-  
րամազդը, համարում էր բոլոր աստուածների հայրը, նա  
ունէր կին, երեխաներ, որոնք մի մի աստուածներ էին

և հաւասարապէս պաշտում էին: Բայց ինչպէս միւս  
ազգերի մէջ, այնպէս էլ մեր մէջ հին աստուածներից  
մէկը համարում էր բոլորից ուժեղը և ընդհանուր ժո-  
ղովրդի սիրելին: Այս կարծիքը ժամանակի ընթացքում  
ժողովրդներին քաշում է դէպի մի աստուած ունենալուն  
և նրանք մի կողմ թողնելով բազմաստուածութիւնը,  
սկսում են պաշտել մի աստուածու և դառնում են մի  
աստուածութեան կողմնակիցներ: Թէ ինչ է ներկայաց-  
նում ինքը Աստուած, այդ մասին ես ոչինչ չեմ ասի, ո-  
րովհետեւ այդ խնդիրը դուրս է մեր այսօրւայ խօսակ-  
ցութիւնից:

## 10.

«Մինչև այժմ դուք տեսաք, թէ ինչպիսի կեանք  
էին անցնում այդ ժամանակաւ մարդիկ: Նորանց կեան-  
քի մի յատուկ դիժն այն էր, որ նորա համայնական  
աշխատանքով ապրում, ընդհանուր ոյժով արտադրում  
էին և ընդհանուրով էլ սպառում: Արտադրութեան գոր-  
ծիքները և այլ միջոցները համայնական, ընդհանուրի  
սեպհականութիւն էին կազմում և այդ համայնական  
սեպհականութեամբ արտադրածն էլ համարում էր ընդ-  
հանուրի սեպհականութիւն: Ես ասացի նաև, որ համայ-  
նական ընդհանուր զանազան աշխատանքների ժամա-  
նակ, ամբողջ գործը, օրինակ ձկնորսութիւնը, որսը,  
դաշտերի ոռոգելը, նաւեր և տներ պատրաստելը կա-  
ռավարում էին զանազան անձնաւորութիւններ, որոնք  
աչքի էին ընկնում իրենց հմտութեամբ և առանձնա-  
յատկութիւններով: Այդ ընտրւած ղեկավարները աշ-  
խատանքը վերջացնելուց յետոյ հեռանում էին ընդհա-  
նուր օրէնքով իրենց պաշտօնից և դառնում հասարակ  
անդամ իրաւունքներով ու պարտականութիւններով



միւսներին հաւասար: Բայց ժամանակի ընթացքում այդ պաշտօնների մէջ զանազան փոփոխութիւններ առաջացան: Ընտրւած ղեկավարը իւր պաշտօնից այլեւ չէր հեռանում և ցանկացած ղէպքում տալիս էր իւր որդիներից կամ ազգականներից նրան, ով աւելի ընդունակութիւն էր ցոյց տալիս այդ արհեստի մէջ: Այս ինքնազուլիս ժառանգութիւն թողնելը լուրիայն ընդունւում էր համայնքի կողմից, մանաւանդ երբ ժառանգութիւն ստացողը որոշ հմտութիւն և արժանիք ունէր: Բայց շատ անգամ այդ ժառանգողը անընդունակ էր ստացած գործը վարել և համայնքը ընդհանուրով հեռացնում էր նրան, պաշտօնը տալով աւելի արժանաւորին: Այս ճանապարհով զարգացաւ իրաւունքների կամ իշխանութեան որդոց որդի ժառանգելը, որը ուժեղացրեց ժառանգողին և համայնքը այլեւ չկարողացաւ նրան հեռացնել իւր պաշտօնից, նոյնիսկ երբ նա ընդունակ չէր այդ պաշտօնի համար: Անա այսպիսի ճանապարհով զարգացաւ, որն է ցեղի տիրապետութիւնը, որը ժամանակի ընթացքում ոյժ ձեռք բերեց և ամբողջ երկրի ղեկը իւր ձեռքն առնելով, հրապարակ եկաւ կառավարելու նաև լայնպիսներին, որոնք բոլոր բաներով գիտուն և հասկացող էին կառավարողից:

«Համարեա միաժամանակ փոխեց նաև համայնքի տնտեսութեան ձևը: Ինչպէս տեսաք համայնքը ունէր ընդհանուր սեպհականութեամբ արտադրութեան միջոցներ, որոնցով ստացածը ևս կազմում էր համայնքի սեպհականութիւն: Այդ արտադրած սեպհականութիւնը սպառւում էր համայնական ոյժով: Բայց ժամանակը և մարդկանց ազահութիւնը փոխեց ամեն ինչ: Աշխատանքը կառավարելու ընտրւած մարդիկ, որոնց յանձ-

նւած էր նաև այս կամ այն գործիքի արդիւնաբերութեան, այս կամ միջոցի գործածելու իրաւունքը, իրաւունքի հետ իրենց ազգակից կամ հէնց իրենց որդոց էին ժառանգութիւն թողնում նաև այդ միջոցները կամ գործիքները: Այդպիսով իւրաքանչիւրը նպատակ է դնում իւր ձեռքի միջոցները իւր մօտիկներին թողնել: Իսկ ձեզ համար արդէն աւելի հասկանալի կլինի, որ արտադրութեան սեպհական միջոցներից ստացած արդիւնքը պէտք է լինի սեպհականութիւն: Իմ գութանով, իմ ցանած կամ վարած հողը պէտք է լինէր իմ սեպհականութիւն կամ իմ մուրճով և իմ ձեռքով պատրաստած իրը երբէք ուրիշին չէր կարող պատկանել: Այս աւելի հասկանալի կըլինի ձեզ համար, եթէ ասեմ, որ այն ժամանակ իւրաքանչիւրը միայն իւր համար, իւր կարիքի չափով էր արտադրում: Այսինքն աւել կամ իսկի չէր մնում, կամ մնացած ղէպքում էլ շատ չնչին չափով, որը աւելի ուշ ժամանակներում փոխանակութեան է հանւում, չնայած փոխանակութիւնը վաղուց, դեռ համայնական ժամանակներից գոյութիւն ունէր: Այդ փոխանակութիւնը մեր այժմայ առետուրն է, որը հնումը այսպէս էր կատարւում:

«Դեռևս համայնքների կամ օրդանների ժամանակ առետուրը գոյութիւն ունէր: Մի որն է համայնք միւսից յափշտակում էր այն, ինչի ինքը կարիք էր զգում: Բայց ժամանակի ընթացքում համայնքները միմեանց հետ աւելի խաղաղ յարաբերութեան մէջ մտան և նրանցից մէկը ստանում էր միւսից այն, ինչ իրեն հարկաւոր էր, և փոխարէնը տալով այն, ինչ միւսին հարկաւոր էր, և ինչից ինքը աւելի ունէր: Այն մարդիկ, որոնք համայնքի կողմից գնում էին միւս համայնքի մէջ իրենց փոխանակութեան գործն առաջ տանելու, հին վաճառական-



ներն էին, որոնք համայնքների մէջ մտցրին նաեւ հիւր լինելու սովորութիւնը։ Այդ նոյն ձեով ապագայում փոխանակութիւն է լինում նաեւ ընտանիքների մէջ։

«Բայց հեշտութեամբ կարող կլինէր տեղի ունենալ այդպիսի վաճառականութիւն։ Ո՛չ, որովհետեւ նախ և առաջ ապրանքը մի տեղից միւսը փոխադրելը մեծ ծանրութիւն էր և մէկ էլ, որ այս օրդայի փոխանակելիքը շատ անգամ միւս օրդային հարկաւոր չէր։ Կար նաեւ մի այլ պատճառ։ Մարդկային տնտեսութիւնն աճելով, մեծանում էր նաեւ հարստութիւնը, որը լինում էր ծաւալով և քանակով մեծ ապրանքները։ Այդ ապրանքները պահելու համար մեծ յարմարութիւններ էին հարկաւոր, որիցդուրկ էին այն ժամանակւոյ մարդիկ և համեմատաբար զուրկ ենք նաեւ մենք այժմ։ Ահա այդ պատճառով մարդիկ մտածեցին հնարել մի միջոց, որն ամեն տեղ ընդունւէր և որին ամեն տեղ կարիք զգային։ Ընտրով այդ միջոցը եւ հնարեցին։ Դա թանգաղին բարերի, ոսկու և արծաթի գործածութիւնն էր, որով կշռուում և չափում էին ապրանքի արժէքը և որը թէ տեղափոխութեան համար դիւրութիւններ ունէր և թէ ապահով էր փշանալուց։ Այդ մետաղներից ժամանակի ընթացքում որոշ ձեով, որոշ ծանրութեամբ, ուրեմն և որոշ արժողութեամբ կտորներ պատրաստեցին և ստացան յարմար միջոց առևտրի համար։ Այդ միջոցը փողն է, որ մինչև այժմ էլ գործադրում է աշխարհիս բոլոր ծայրերում։

«Այս բոլորից յետոյ մարդիկ կամայ յանձն են առնում որոշ արհեստ կամ որոշ աշխատանք և այդպիսով մէկը զբաղւում է զբականութեամբ, մէկը հողագործութեամբ, մէկը արհեստներով, միւսը առևտրով և այլն, և այդպիսով տեղի է ունենում որեւէ ժողովրդի մէջ աշ-

տանքի բաժանում, որի մասին զուցէ ուրիշ անգամ կ'սօսեմ։

«Ես այս երեկոյ վերջացրի իմ պատմութիւնը, վերջացնելով նաեւ նախապատմական, շատ հին ժամանակների մարդկանց ապրուստի, նիստ ու կացի, պարապմունքի, նրանց մտաւոր և տնտեսական դրութեան ամբողջ նկարագրութիւնը։ Միւս անգամ կ'պատմեմ փոքրիկ պատմութիւններ զանազան ազգերի զանազան գործերի ընդհանուր միացեալ ոյժով առաջ տանելու մասին, որը մեզ համար աւելի կարեւորութիւն է ներկայացնում։













C 22m  
6.01

21.51

900 0 800

ԳԻՆՆԷ 15 ԿՈՊ.

5

7

ՀՀ Ազգային գրադարան



NL0345673



37